

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԸ ՍԿՍԱԻ ՔՆՆԱՐԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏ ՆՈՐ ԴԵՍՊԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Միացեալ Նահանգներու Ծերակոյտի արտաքին չարաքերութեանց յանձնաժողովին ներս, տեղի ունեցաւ քննարկում՝ Հայաստանի մօտ նոր դեսպանի նշանակման հարցի շուրջ:

Նախագահ ձորճ Պուշի կողմէ դեսպանի պաշտօնին համար առաջարկուած է Մարի Եովանովիչ թեկնածութիւնը, որ պէտք է հաստատուի Ծերակոյտի ընդհանուր ժողովին կողմէ:

Նախագահ ձորճ Պուշի կողմէ առաջարկուած նախկին թեկնածուի՝ Ռիչարտ Հոկլընտի հաստատումը ձախողութեան մատնուած էր, երբ Հոկլընտ մերժած էր ճանչնալ Հայկական Յեղասպանութիւնը:

Յանձնաժողովի անդամներուն կողմէ հարցաքննուելով, նոր թեկնածուն եւս, բաւարարուեցաւ ներկայացնելով Նախագահի տեկեցուածքը, որ կը մերժէ օգտագործել «ցեղասպանութիւն» բառը:

Առայժմ պարզ է, թէ Յանձնաժողովի անդամները ինչպիսի կեցուածք պիտի որդեգրեն Եովանովիչի թեկնածութեան կապակցութեամբ: Վերջնական պատկերը աւելի յստակ կը դառնայ երբ դեսպան Եովանովիչ կը պատասխանէ իրեն ուղղուած գրաւոր հարցումներուն:

ՀԱԿԱՌԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՍՔԻՆ ՏԱՍՆԵԱԿ ՀԱԶԱՐԱԴՈՐՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՆՐԱՅԱԲԻՆ ԼԵԻՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ Է



ԼԵՆՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ
 Կ'ՆՈՂՋՈՒՄԷ ԵՒ ՄԱՍՆԱԿ
 ԿԱՊԱՐԱՐՈՐՆԵՐԸ, ՈՐՈՒՄ ԿՐ
 ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԻ
 ԽԱՆՐԱԽԱԼԱՔԻՆ



Ի հեճուկս Հայաստանի իշխանութիւններու՝ Համաժողովրդական Շարժման հանրահաւաք խափանելու բոլոր ջանքերուն, Յունիս 20-ին տասնեակ հազարաւորներ ներկայ եղան Մարտ 1-ի ողբերգական դէպքերէն ետք տեղի ունեցող առաջին ցոյցին:

Երեւանի քաղաքապետարանը մերժած էր արտօնութիւն տալ, ուստի կանուցութիւնը յայտարարած էր,

թէ թոյլ պիտի չտայ ընդդիմութեան, չարտօնուած հանրահաւաք կազմակերպելու, իսկ առաւօտեան գրեթէ ամբողջութեամբ սահմանափակուած էր մարզերէն եկող մեքենաներու մուտքը Երեւան: Հակառակ այս եւ այլ խոչընդոտներուն իշխանութիւնները չկարողացան ճզմել ժողովուրդի կամքը:

Երեկոյեան ժամը 6-ին նախատեսուած հանրահաւաքէն ժամեր

առաջ ներքին գործերը շրջապատած էին Մատենադարանի մուտքը եւ հետզհետէ ստուար թիւ կազմող ժողովուրդին կողմէ ընէին 15 վարկեանի ընթացքին ցրուելու:

Այս բոլորը սակայն երկար չտեւեց, քանի որ հազարաւոր մարդիկ անցնելով Մաշտոց եւ կորիւն փողոցները շարժեցան դէպի Մատենա

Մար. Էջ 4

ԵՆԻՍՎ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՏՐՈՒԱԾ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԸ

Չորեքշաբթի, Յունիս 25-ին Ստրասբուրգի մէջ կայացած Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵՆԻՍՎ) ընթացքին քննարկուեցաւ Հայաստանի վերաբերող թիւ 1609 բանաձեւի կատարման հարցը եւ որոշուեցաւ մինչեւ Յունուար 2009 երկարաձգել Հայաստանի իշխանութիւններուն տրուած պայմանաժամը՝ ԵՆԻՍՎ-ի պահանջները կատարելու համար:

Քաղաքական բանտարկեալներու, ազատ ցոյցերու եւ Մարտ 1-ի դէպքերու անկախ հետաքննութեան վերաբերող պայմաններուն վրայ աւելցաւ նոր մը եւս՝ «Ա1+» հեռատեսիլի ալիքը եթեր վերադարձնելու պայմանը:

Համաժողովրդական Շարժման ներկայացուցիչներէն Լեւոն Զուրաբեան մեկնաբանելով ԵՆԻՍՎ-ի նոր որոշումը կարծիք յայտնեց, որ հոն կան դրական եւ ոչ դրական կէտեր: «Դրական է այն, որ բանաձեւի պահանջներու կատարման հարցը դարձաւ ԵՆԻՍՎ լիազուածար նիստի քննարկման առարկայ, ինչի արդիւնքում ի յայտ եկան նոր պահանջներ, եւ դրանցից ամենակարեւորը «Ա1+»-ին հեռարձակ-

ման արտօնագրի տրամադրման պահանջն է: Եւ միւսը՝ աւելի յստակեցրեցին քաղաքատարկեալներին ազատ արձակելու պահանջը»:

Բացասականը, ըստ Լեւոն Զուրաբեանի, այն է, որ չափազանց մեծ ժամկէտ կը տրուի բանաձեւի կատարման համար. «Մեզ համար անհասկանալի է, թէ քաղաքատարկեալների ազատ արձակման գործընթացի համար ինչո՞ւ այդքան մեծ ժամկէտ տրուեց. դրա համար կարելի էր շատ սեղմ ժամկէտներ սահմանել», աւելցուց Զուրաբեան:

Միւս կողմէ, Եւրոպայի Խորհուրդի գլխաւոր քարտուղար Թերրի Տէյլիս Ստրասբուրգի մէջ հրաւիրուած մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ իր համար ամենակարեւորը Մարտ 1-ի իրադարձութիւնների ժամանակ տեղի ունեցած սպանութիւններու հետաքննութիւնն է:

«Ես անհանգստացած եմ, որ այս հարցին քիչ ուշադրութիւն կը դարձուի: Կը շարունակուի հարցնել իմ հայ գործընկերներուն՝ ի՞նչ տեղի կ'ունենայ ոստիկանութեան հետաքննութեան հետ», ըսաւ Թերրի Տէյլիս:

Ի ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐժՄԱՆ ՀԱԲԱՔՆԵՐ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ, ՓԱՐԻԶԻ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ



Յունիս 22-ին, Լոս Անճելըսի Հոլիվուտի շրջանի մէջ տեղի ունեցաւ հաւաք՝ ի գորակցութիւն Հայաստանի Համաժողովրդական Շարժման: Հաւաքի մասնակիցներուն կողմէ ընդունուեցաւ դիմում՝ ուղղուած ԵՆԻՍՎ նախագահ Լուիս Մարիա Տէ Փուչին, կոչ ընելով Եւրախորհուրդին հետեւողական գտնուելու՝ թիւ 1609 բանաձեւի բոլոր կէտերու Հայաստանի իշխանութիւններուն կողմէ իրագործման իրենց պահանջին մէջ, մասնաւորապէս քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման հարցով:

Յունիս 20-ին գորակցական նման ցոյցեր տեղի ունեցան նաեւ Փարիզի եւ Մոսկուայի հայկական դեսպանատուններուն առջեւ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ ՊԵՏՔ ԵՆ ԲԱԶԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Հայաստանեան քաղաքական ուժերի շրջանում բաւական տարածուած է մի մօտեցում, երբ նրանց գործողութիւնները անորակութեան եւ անարդիւնաւէտութեան մասին որեւէ դիտարկման արձագանքում են, թէ հասարակութեան որակն է այդ անարդիւնաւէտութեան եւ նաեւ որոշակի անորակութեան պատճառը: Այլ կերպ ասած, երբ որեւէ քաղաքական ուժի որեւէ մէկն ասում է, թէ այսինչ բանը սխալ է արուել կամ արուել է վատ, ապա անմիջապէս հնչում է պատասխան, եթէ հասարակութիւնն այսպիսին չլինէր, այլ լինել այնպիսին, ապա իրենց գործունէութիւնն այլ կերպ կը լինէր: Այդ մօտեցումը շատ յաճախ, գրեթէ միշտ կիրառում է իշխանութիւնը, կամ իշխանական ուժերը: Օրինակ, երբ իշխանութեանը մեղադրում ես կոռուպցիայի դէմ պայքարի անարդիւնաւէտութեան համար, պատասխանն անմիջապէս լինում է այն, որ պայքարն ամբողջ ուժով է, պարզապէս հասարակութիւնն ինքը պատրաստ չէ ապրել առանց կոռուպցիայի եւ բաւարար չափով չի օգնում իշխանութեանը: Կամ, երբ ասենք որեւէ մի ուժի, իշխանական, մեղադրում ես, որ նա ընտրութեանը մի բան էր ասում, իսկ յետոյ գնաց ու միացաւ նրանց, ում ասում էր այդ բանն ամբողջ իստութեամբ, անմիջապէս պատասխանում են, որ քանի դեռ հասարակութեան մէջ կան փողով ձայն վաճառողներ, ապա միշտ էլ կը լինի այդպէս:

Իհարկէ, հասկանալի է, որ դրանք ուղղակի անհետեւ անհետաներ են, որ կոռուպցիայի դէմ պայքարը, կամ քաղաքական առեւտուրը բացարձակապէս կապ չունեն հասարակութեան հետ: Պարզապէս հասարակութիւնն էլ, ազգի եւ պետութեան նման, դարձել է քաղաքական իմպոտենտութեան ար-

դարացում: Եթէ որեւէ քաղաքական ուժի մօտ ինչ որ բան չի ստացուում, կամ ցանկութեան, կամ ունակութիւնների բացակայութեան պատճառով, ապա դա անմիջապէս բարդուում է հասարակութեան վրայ: Նոյնը ինչ որ ժամանակ անում էր նաեւ ընդդիմութիւնը, սակայն Լեւոն Տէր-Պետրոսեանի ասպարէզ վերադառնալուց յետոյ ընդդիմութեան մարտավարութիւնը փոխուեց, եւ այժմ այն կառուցուած է ոչ թէ սեփական սխալները բացատրելով նրանով, թէ այս ժողովուրդը պատրաստ էր մինչեւ վերջ պայքարի, կամ հասարակութիւնը մեր յետեւից չեկաւ, այլ հասարակութեան դերը բարձրացնելու, հասարակութեանը սեփական որակների հանդէպ հաւատներ շնչեցնելու, հասարակութեանն առաջնորդող դիրքում դնելու վրայ:

Երկու դէպքն էլ իհարկէ առնուազն մի փոքր չափազանցութիւն է: Այսինքն, չափազանցութիւն է եւ այն, որ հասարակութիւնն իր որակներով այնքան հետ է, որ իշխանութեան լաւագոյն նախաձեռնութիւններին պատրաստ չէ աջակցել, եւ այն, որ հասարակութիւնն այնքան լաւն է, որ պատրաստ է մինչեւ վերջ պայքարել իր ազատութիւնների համար եւ փոխել իր իսկ կեանքը: Իրականում բոլորին էլ յայտնի է, որ հասարակութիւնը, յատկապէս Հայաստանում, խիստ բազմաշերտ է: Կայ եւ այն շերտը, ընդ որում բաւական զգալի, որը դէմ է ցանկացած բարեփոխման, կայ եւ այն շերտը, որը պատրաստ է յանուն իր քաղաքացիական իրաւունքի մինչեւ վերջ պայքարի, կայ եւ այն շերտը, որի համար կարեւոր է բացառապէս սոցիալական բարեկեցութիւնը՝ կարեւոր չէ կոռուպցիոն, թէ օրինական յարաբերութիւնների միջոցառում: Մեծ հաշուով այդ բոլոր շերտերը նոյն

բանն են ուզում՝ լաւ ապրել, պարզապէս տարբեր է լաւ ապրելու մասին նրանց պատկերացումները: Եւ թերեւս դա է մեծագոյն խնդիրը, որ կայ այսօր մեր հասարակութեան մէջ: Ինչ խօսք, որոշակի առումով բնական է, որ հասարակութեան տարբեր խմբեր տարբեր պատկերացումներ ունեն լաւ ապրելու մասին: Սակայն, պէտք է լինի պատկերացումների նուազագոյն շեմ, որը հանրութեան համար լինի ընդհանուր: Այսինքն, պէտք է լինի արժէքային բազա, կամ բազային արժէքներ, որոնք խորքի որեւէ կէտում կը միաւորեն հասարակութեանը, եւ միայն մակերեսին աւելի մօտ տեղի կ'ունենայ բնականոն բաժանումների պրոցեսը: Քաղաքական ուժերի, յատկապէս իշխանական վերնախաւի խնդիրն է իրենց գործունէութեամբ հենց ապահովել այդ խորքային բազայի գոյութիւնը, որպէսզի մակերեսին մօտ տարրականները հանրութեանը երբեք չբաժանեն թշնամական խմբերի, անկախ այդ խմբերի քանակական յարաբերակցութիւնից: Մինչդեռ քաղաքական ուժերը, յատկապէս իշխանական վերնախաւը, ոչ թէ ձեւաւորում են այդ խորքային բազան, այլ լիարժէք փորձում են օգտուել դրա բացակայութիւնից, անգամ որպէս թշնամի դիտելով այդ բազայի ձեւաւորման որեւէ փորձի հեղինակի: Փոխարէնը նրանք հանրութեանը մատուցում են միանախանութեան, համերաշխութեան, հաւաքականութեան, ազգային առանձնապատկութեան եւ այլ նման պարզունակ արժէքների, փաստացի սրաֆարեանների մի ամբողջութիւն, որոնց լաւագոյնը, ինչ կարող է սպասել, հանրային ջրի մակերեսին մնալն է՝ ինչպէս պլաստիկ շէրը լճի վրայ:

ՋէՅՄ ՅԱԿՈՒԲԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՐՇԱԻ

Եթէ ուշադիր հետեւենք իշխանական քարոզչութեանը, ապա կը նկատենք, որ վերջին շրջանում մի արշաւ է սկսուել, որի նպատակը Հայաստանում գների բարձրացումը միջազգային շուկայի գների աճով պայմանաւորելն է:

Մեր ձեռնաստուն հեռուստաընկերութիւններն իրենց պարտքն են համարում լրատուական թողարկումներում անպայման մի ռեպորտաժ խցկել այն մասին, որ այսինչ երկրում մարդիկ դուրս են եկել փողոց՝ գների աճի դէմ բողոքելու: Այս արշաւի նպատակը պարզունակ է ու թերեւս շատերի համար հասկանալի. այսպիսով իշխանութիւնը ուզում է մարդկանց ներշնչել, թէ գիտէ՞ք ինչ կայ, գները միայն մեզ մօտ չէ, որ աճում են, ամէն տեղ էլ աճում են, եւ դա պէտք է դժգոհութիւն առաջացնի ոչ թէ իշխանութեան դէմ, այլ միջազգային շուկայի, այսպէս ասած՝ դժգոհէք աշխարհքից, ոչ թէ իշխանութիւնից: Իհարկէ, շատ լաւ կը լինէր, եթէ Հայաստանում գների աճը պայմանաւորուած լինէր միայն միջազգային շուկաներում տեղի ունեցող վարզացումներով: Բայց արդեօ՞ք դա այդպէս է: Իհարկէ՞ ոչ: Հայաստանում գները աճում են շատ աւելի արագ, քան, ասենք, Եւրոպայում: Մեր իշխանութիւնը, իհարկէ, փրփուրը բերանին կը փորձի հերքել այս ճշմարտութիւնը: Իսկ այն, որ սա

ճշմարտութիւն է, մենք չենք ասում. ասում է Համաշխարհային բանկը իր, Հայաստանի զարգացման քաղաքականութեան ընտրութիւններ 2008-2012 ծաւալուն եւ բովանդակալից գեկոյցում:

Պատկերուած գրաֆիկներից պարզ երեւում է, թէ ինչ է կատարուում Հայաստանում գների հետ, եւ որքանով են միջազգային շուկայում գների փոփոխութիւնները արտացոլում մեր շուկայում: Բերուած են բենզինի (գծ-1) եւ դիզելային վառելիքի (գծ-2) օրինակները: Գրաֆիկում պատկերուած յատուածագծերը արտայայտում են բենզինի եւ դիզելային գները Եւրոպայում, իսկ հոծ գծով պատկերուած են դրանց գները Հայաստանում: Այս գրաֆիկներում բերուած պատկերը ներկայացնում է իրավիճակը 2003-ից սկսած: Հոծ գծի եւ հատուածագծի միջեւ ուղղահայեաց գծով հեռաւորութիւնը արտայայտում է այն լրացուցիչ շահոյթը, որ ստացել եւ ստանում են բենզինի ու դիզելային բեքի բեքնով զբաղողները Հայաստանում: Ինչպէս տեսնում ենք, այդ երկու գծերի միջեւ հեռաւորութիւնը գնալով աճում է, ինչը նշանակում է, որ այդ բեքներն անորակ են, որ այդ բեքները դիտելիքի կամ, աւելի դիտելի կ'ստան, չարդարացումը շահոյթը նոյնպէս գնալով աճում է: Բենզինի եւ դիզելային հայկական ու եւրոպական գների տարբե-

րութիւնը տեղ-տեղ հասնում է մինչեւ 50 տոկոսի, այսինքն՝ Հայաստանում բենզինի ու դիզելային թանկ են եղել, քան Եւրոպայում: Այստեղ պէտք է նշել մի կարեւոր հանգամանք: Եւրոպայում բենզինի տեղափոխման, պահպանման եւ մանրածախ վաճառքի չափազանց խիստ տեխնիկական պահանջներ են գործում: Հարկային բեռն էլ այս բեքներին վրայ շատ աւելի ծանր է, քան Հայաստանում: Իսկ այդ ամէնը զգալիօրէն բարձրացնում է բենզինի ինքնարժէքը: Այլ կերպ ասած, շատ աւելի թանկ ինքնարժէքով բենզինն ու դիզելայինը Եւրոպայում շատ աւելի է ժան է վաճառուում, քան համեմատաբար աւելի ցածր ինքնարժէքով Հայաստանում: Համաշխարհային բանկի փորձագէտների համոզմունքով, դա մեր ներքին շուկայում այդ բեքներ կենտրոնացուածութեան հետեւանք է: Այսինքն՝ այդ բեքները մոնոպոլիզացուած է, եւ մրցակցութիւն չկայ: Կարելի է վստահաբար պնդել, որ բոլոր միւս ապրանքների դէպքում, եթէ համեմատենք մեր եւ եւրոպական գները, ապա կը ստացուի նոյն պատկերը: Այնպէս որ, քարոզչական արշաւը, թէ մեզ մօտ գներն աճում են ճիշդ այնպէս, ինչպէս միջազգային շուկայում, պարզունակ բլեֆ է:

ՀԱՅԿ ԳԵՈՐԳԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ԻՆՔՆԱՅՈՍԻ ՄԱՏՆՈՒԱԾ

Յունիսի 20-ի երկար սպասուած հանրահաւաքը կայացաւ: Ինչ ցոյց տուեց այն: Նախ, որ հակամարտող կողմերը, այսպէս կոչուած, գործողութիւնների ծրագիր, պլան չունեն:

Իշխանութիւնը չգիտի իր անելիքը, թոյլ տա՝ հանրահաւաքները, թե՛ ոչ, ինչ դիրք բռնի հանրահաւաք անողների նկատմամբ? Նորից հետապնդումների դիմի, թէ՞ ամէն ինչ թողնի ինքնահոսի, ինչպէ՞ս թուլացնի հասարակական լարումը: Ընդդիմութիւնն էլ իր հերթին ցոյց տուեց, որ գերնպատակը հենց հանրահաւաք անելն է, իսկ գործողութիւնների միակ պլանը, Մատենադարանի կամ Ազատութեան հրապարակը գրաւելը: Ոստիկանների, մեծահոգութիւնը, հանրահաւաքի մասնակիցներին Մատենադարանի հարթակ բարձրանալու թոյլտուութիւնը, դիտուեց որպէս մեծ յաղթանակ: Ընդհանրապէս այնպիսի սպառնալիք է, որ եթէ իշխանութիւնը դադարեցնի ռեպրեսիաները եւ թոյլատրի բոլոր դեմոկրատական ազատութիւնների լիարժէք կենսագործունէութիւնը մեզանում, ապա ընդդիմութիւնն այլեւս անելիք չի ունենայ, եւ ժողովրդական շարժումն էլ արագ կը մարի: Այսինքն համակարգուած գործողութիւններ, հեռանկարին ուղղուած քայլեր չեն մշակուած: Կայացուած են սիտուացիոն որոշումներ ու հապճեպ միջոցառումներ, որոնք յաճախ ոչ թէ մօտեցնում են նպատակակէտը, այլ հանգեցնում են փակուղու: Այնպէս որ, եւ իշխանութիւնը պահելու, եւ իշխանութիւնը գրաւելու համար յատակ մշակուած ռազմավարութիւն ու մարտավարութիւն է անհրաժեշտ, քայլերի խելամիտ յաջորդականութիւն, ամենակարեւորը թարմ ու նոր լուծումներ: Ինչը մեր քաղաքական դաշտում իսպառ բացակայում է:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆ ԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍՍԵՏՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԻԹԹԵԱՆ
Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ.

«ՉԵՄ ԶՂՋՈՒՄ, ՈՐ ԱՅՍՕՐ ԱՅՍՏԵՂ ԵՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»։ «Ես ճիշդ ուղի եմ բռնել, ես չեմ գոչում, չեմ ափսոսում, որ այսօր այստեղ եմ: Կը գայ ժամանակը՝ ամէն ինչ պարզ կը լինի, թէ ես ինչի համար եմ այստեղ», - յայտարարեց յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ կալանաւորուած՝ Ազգային ժողովի պատգամաւոր Սասուն Միքայէլեանը «Երեւան Կենտրոն» քրէակատարողական հիմնարկում «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում:



Սասուն Միքայէլեանը Փետրուարեան ցոյցերում ընթացքին՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ

«Լինելով Հանրապետական կուսակցութեան անդամ՝ ես չեմ եղել այնտեղ կամակատար, ես իմ հայեացքներն եմ ունեցել քաղաքական եւ իմ տեսակէտն եմ ունեցել այս տարիների ընթացքում», - ընդգծեց Միքայէլեանը: - «Այն, ինչ հիմա է կատարուած՝ ես միշտ ասել եմ, որ պրոբլեմներ կան այստեղ եւ ժողովրդի հետ: Եւ ամէն ինչից անկախ՝ ես չէի կարող ժողովրդից հեռանալ, անտարբեր լինել»:

«Այն, ինչ գրել են, սուտ գործեր են կոծկել վրաս, սուտ ցուցմունքներ են տալիս», - վստահեցրեց կալանաւորուած պատգամաւորը՝ յաւելելով. - «Ես կարող եմ դատուել իմ արածի համար, բայց չարածիս համար ես չեմ դատուել, ես դաւաճանութեան յղուածով չեմ դատուել: Ես իմ կեանքը դրել եմ, կռուած տղայ եմ՝ հրամանատար, ես ո՞նց կարող էի նման քայլ անել: Մարտի 1-ին ես արդէն այնտեղ էի որպէս պատգա-

մաւոր եւ աշխատել եմ ամէն ինչ կանխել: Իմ համար ամէն ինչ պարզ է, թէ ինչ են ուզում»:

Անդրադառնալով ներկայիս իրավիճակից դուրս գալու ուղիներին, մասնաւորապէս՝ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ երկխօսութեան հնարաւորութեանը, Սասուն Միքայէլեանը համոզմունք յայտնեց, որ «մեզ համախմբուել է պէտք, մարդիկ պէտք է հասկանան՝ ինչ է կատարուած»:

Նա հնարաւոր համարեց երկխօսութիւնը Սերժ Սարգսեանի եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի միջեւ՝ պարզաբանելով. - «Այն տղաները, որ կան այստեղ, բոլորը թէ՛ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ են մօտ եղել, թէ՛ Սերժ Սարգսեանի: Իմ կարծիքով՝ այս տղաներին պէտք է բաց թողնեն, գնան նստեն բանակցութեան, խորհրդարանը պէտք է ջրեն, որովհետեւ դա քայլ է՝ մի քայլ պէտք է արուել այս երկրում: Առաջին քայլն է. նորմալ ընդդիմութիւն ձեւաւորուել Ազգային ժողովում, ինչ-որ տեղ յոյսի միջոցառում կը ձեւաւորուի»:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՆՈՒԱԶԵԼ Է

Յունիս 24-ին Ազատութեան Տուն (Freedom House) իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակել է անցումային երկրների վերաբերեալ գեկոյցը, որտեղ Հայաստանի մասին ասուած է, որ շատ քիչ առաջընթաց է արձանագրուել իշխանութեան տարբեր թեւերի տարանջատման ուղղութեամբ: Ընդհակառակը, իշխող կուսակցութիւնն ու վերնախաւն իր ձեռքում է կենտրոնացրել քաղաքական եւ տնտեսական իշխանութիւնը: Քաղաքական վերնախաւի եւ բիզնեսի սերտաձուլը խոչընդոտում են ժողովրդավարական հաստատութիւնների կայացմանը, իսկ կեղծուած ընտրութիւնների արդիւնքում իշխանութեան գործունէութիւնը հանրային վստահութիւն չունի, եւ թերահաւատու-

թիւն կայ քաղաքական եւ քաղաքացիական գործընթացներում հասարակութեան դերի հանդէպ: Առանձին նշուած է հանրային վստահութեան պակասը խորհրդարանի հանդէպ:

Լրատուամիջոցների վերաբերեալ գեկոյցում ասուած է, որ լրատուամիջոցներին յաջողուել է հասնել որոշակի փոփոխութիւնների հեռարձակուող լրատուամիջոցներին արտօնագիր շնորհելու օրէնսդրութեան եւ յանձնաժողովի հարցում, սակայն միաժամանակ լրագրողների դէմ յարձակումները յաճախակի են դարձել, յատկապէս 2007 թ. Խորհրդարանի ընտրութիւնից առաջ:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում ժողովրդավարութեան ցուցանիշը 5.14-ից նուազել է 5.21.

ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ԹԻԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ Է 900 ՀԱԶԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ

Հայաստանի տարածքային կառավարման նախարարութեանն աւելցրելով Միգրացիոն Գործակալութեան պետ Գագիկ Եգանեանի յայտարարութեան համաձայն, 1992 թուականից ի վեր Հայաստանից արտագաղթածների թիւը կազմում է 900 հազարից մէկ միլիոն:

Եգանեանի վստահեցմամբ, Ռուսաստանի Դաշնութիւնում, որտեղ շատ են հայազգի թէ՛ աշխատանքային միգրանտները, թէ՛ մշտական բնակութիւն հաստատածները, փախստականի կարգավիճակ հայցողներ գրեթէ չեն լինում:

Մինչդեռ եւրոպական երկրներում, որտեղ կացութիւնը օրինական դարձնելու ամենադիւրին ճանապարհը փախստականի կարգավիճակն է, շատերն են փորձում ստանալ այն:

ԴԵՅՎԻԴ ԿՐԱՄԵՐ. «ԵԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՇԵՂՈՒԵԼՈՒ ՔԱՅԼԵՐ ԶԵՌՆԱՐԿԻ»

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանն Յունիս 24-ին ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի՝ ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների եւ աշխատանքի հարցերով տեղակալ Դեյվիդ Կրամերին: ՀՀ կառավարութեան ղեկավարի հետ հանդիպմանը նա ասել է, որ Հայաստան է այցելել վերահաստատելու ԱՄՆ դեսպանութեան եւ իրենց միւս գործընկերների ուղերձը՝ ԱՄՆ-ը Հայաստանի գործընկերն է եւ աջակիցը:

Ըստ Դեյվիդ Կրամերի, հայամերիկեան յարաբերութիւնները կարող են զգալիօրէն ամրապնդուել, եթէ Հայաստանը ժողովրդավարութեան ուղուց չչեղուելու քայլեր ձեռնարկի եւ ընդունի այն առաջարկութիւնները, որ ներկայացուած են երկրի կառավարութեանը: Առաջարկութիւնները վերաբերել են հանրահաւաքների անցկացման եւ մամուլի ազատութեան ապահովման, Մարտի 1-ի դէպքերի կապակցութեամբ լուրջ եւ արժանահաւատ հետաքննութեան անցկացման, քաղաքական հայացքների համար ձեռքարկուածների ազատ արձակման, ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան ընդգրկմամբ իրական երկխօսութեան ձեռնարկման խնդիրներին:

Զրոյցի ընթացքում Դեյվիդ Կրամերը մտահոգիչ է համարել նաեւ հայաստանեան որոշ թերթերով եւ հեռուստատեսութեամբ հակամիտական քարոզչութեան իրականացումը, ընդգծելով, որ հայ-հրէական յարաբերութիւններում մինչ այժմ նման մտահոգիչ երեւոյթներ չեն եղել:

Վարչապետը խիստ դատապարտելի եւ անթոյլատրելի է համարել լրատուամիջոցներում հակահրէական արտայայտութիւն թոյլ տալը, համաձայնելով հիւրի տեսակէտին, որ Հայաստանում հակահրէական միջոցառում չկայ: ՀՀ



ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դեյվիդ Կրամեր

կառավարութիւնը, վարչապետի հաւաստմամբ, հայ-խորալեւական յարաբերութիւնները զարգացնելու որոշակի նախաձեռնութիւններ ունի եւ պատրաստուած է նաեւ աջակցել իսրայէլի 60-ամյակի կապակցութեամբ Հայաստանում հայ-խորալեւական ծառուղու հիմնման նախաձեռնութեանը, որի նպատակով իսրայէլից կը բերուի 60 ծառ:

Նոյն օրը, Դեյվիդ Կրամեր հանդիպում է ունեցել նաեւ Համա-ժողովրդական Շարժման առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ:

Զրոյցի ընթացքում, որի առանցքում եղել են հայաստանեան յետընտրական զարգացումները, Հայաստանի առաջին նախագահը ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալին, որը զբաղուած է նաեւ ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների հարցերով, ասել է, որ պատրաստ է երկխօսութիւն սկսել իշխանութիւնների հետ՝ եթէ վերջիններս ազատ արձակեն «քաղբանտարկեալներին»:

ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆԻ ԱԶԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՕՏ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»։ «Ժամանակ երեւան» թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի աջակիցները այսօր բողոքի ցոյց էին կազմակերպել Հայաստանում Միացեալ Նահանգները դեսպանութեան շէնքի մօտ՝ Բաբաջանեանին վաղաժամկէտ ազատ արձակելու պահանջով:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց ցոյցի մասնակիցներից Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը, դեսպանատան շէնքից ցուցարարների հետ կարճատեւ զրոյցի դուրս եկաւ այս օրերին Երեւանում գնտուող Միացեալ Նահանգների պետքարտուղարի տեղակալ ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Դեյվիդ Կրամերը:

«Նա գրուցեց ցուցարարների

հետ, ասաց, թէ ինչ առաքելութեամբ է այստեղ, ասաց, որ ողջունում է մեր ակցիան, եւ ամէն ինչ հաշուի կ'առնի», - փոխանցեց Փոստանջեանը:

Ցուցարարները Դեյվիդ Կրամերին են յանձնել հայաստանեան մի շարք լրատուամիջոցների ղեկավարների ու հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների ստորագրութեամբ նամակ, որի հիմնական պահանջը, ինչպէս ասաց Փոստանջեանը, վերաբերում է Արման Բաբաջանեանին:

Արման Բաբաջանեանը, ով գինձառայութիւնից խուսափելու մեղադրանքով դատապարտուել է 3,5 տարուայ ազատազրկման, անազատութեան մէջ է արդէն 2 տարի: Նրան վաղաժամկէտ ազատ արձակելու մասին մի քանի միջնորդութիւն մերժուել է:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ԱՆՊԱՏԻԺ ՄՆՈՒՄ

2003թ-ից Քրէական օրէնսգիրքը պատիժ է նախատեսում խոշտանգողի նկատմամբ, սակայն հայաստանեան պրակտիկայում դեռեւս որեւէ պաշտօնեայ պատիժ չի կրել այդ յօդուածով: Ըստ Հայաստանի Հեւսինքեան Կոմիտէի նախագահ Ալետիք Իշխանեանի՝ Հայաստանում բռնութիւնների կիրառելու, ծեծի ենթարկելու, խոշտանգումների շատ փաստեր են լինում, որոնց մեծ մասը գրանցուած է ոստիկանական բաժանմունքներում նախաքննութեան ժամանակ:

Յունիս 23-ին քննարկուած էր կազմակերպուել խոշտանգումների դէմ կոնվենցիայի արդիւնաւէտ իրականացումը Հայաստանում թեմայով:

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓՈԽՏՆՕՐԷՆԸ ԳՆԱԳՆԱԿՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՍՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
«Հայաստան» համահայկական հիմնադրամի փոխտնօրէն Արա Վարդանեանը «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում հերքեց հիմնադրամի գործունէութեան վերաբերեալ վերջերս մամուլի տարածած բացասական լուրերը, մասնաւորապէս՝ նուիրատուութիւնների վատնման եւ փոշիացման մասին:

«Նոյնիսկ մի թերթում կար յօդուած, որ Սփիւռքը բողոքում է, որ հիմնադրամի գումարներով պաշտօնեաների համար հիմնադրամը գնել է «Չիփ»-եր: Պաշտօնապէս ուզում եմ հերքել՝ այդպիսի բան գոյութիւն չունի, հիմնադրամը երբեւիցէ ոչ մի պաշտօնեայի համար «Չիփ» չի գնել եւ չի էլ գնելու», - յայտարարեց Արա Վարդանեանը՝ յաւելելով. - «Հիմնադրամը անցնում է երկու տեսակի աուդիտ՝ ֆինանսական եւ ֆիզիկական: Այս բոլոր ստուգումներով հանդերձ՝ հիմնադրամը ուղղակի չէր կարող գումարների ոչ պատշաճ տնօրինում ունենալ»:

«Հայաստան» հիմնադրամի՝ անցած տարուայ Նոյեմբերին կայացած հեռուստամարաթոնին հանգանակուել էր 15 միլիոն 270 հազար դոլար: Դա ամենաարդիւնաւէտ մարաթոնն էր՝ ամենամեծ մուտքով: Հեռուստամարաթոնի ընթացքում ոչ միայն անմիջապէս գումարներ են հաւաքուում, այլեւ դրանց մի մասը ուղղակի յայտարարուում է խօսողի ձեռով: Ըստ հիմնադրամի փոխտնօրէնի, պատահում է, որ նոյնիսկ խոստացածից աւելի են տալիս, սակայն պատահում է նաեւ հակառակը՝ խոստումը չեն կատարում, թէեւ այդպէս աւելի հազուադէպ է լինում: Սովորաբար տարուայ կէսին հաւաքուած է լինում ամբողջ գումարի մօտ 50 տոկոսը, եւ հիմա էլ, ինչպէս վստահեցնում է Արա Վարդանեանը, շեղում չկայ. - «Մօտաւորապէս 7 միլիոնի չափ արդէն ստացել ենք: Եւ նորից եմ ուզում շեշտել՝ պէտք է կարծել, որ 15-ից 7 է: Ոչ, 15-ից կը լինի 13-14. սովորաբար հիմնադրամի ցուցանիշը տատանուում է 90-95 տոկոսի սահմաններում: Ուղղակի կան տեղական մարմիններ՝ հիմնադրամի ներկայացուցիչներ, որոնք յայտարարել են գումարը, բայց դեռեւս չեն ընտրել ծրագիրը»:

Արա Վարդանեանի փոխանցմամբ՝ կան երկու մեծահարուստներ, որոնք խոստացել են գումարը, «եւ ներկայումս մենք բանակցում ենք իրենց հետ»: Այդ երկու մեծահարուստները միասին, ըստ Վարդանեանի, խոստացել են մէկ միլիոն դոլար:

«Այս հեռուստամարաթոնին ամենամեծ բարերարը եղել է Լեւոն Հայրապետեանը, որը 2,5 միլիոն է խոստացել, եւ արդէն այս պահին նա բանակցում է Լեւոնային Ղարաբաղի կառավարութեան հետ, որպէսզի ստանձնի իր ծրագրերը: Եւ

կան երկու հոգի՝ Լուիզ Սիմոն Մանուկեան եւ Հրայր Յովնանեան, որոնք խոստացել են 500-հազարական դոլար: Երկուսն էլ չեն մերժում. հենց երէկ ես խօսակցութիւն եմ ունեցել մեր Նիւ Եորքի գրասենեակի հետ. Լուիզ Սիմոն Մանուկեանը վերահաստատել է, որ պատրաստ է տրամադրել փողը: Խնդիրը այն է, որ ուղղակի նա պէտք է ընտրի ծրագիր», - ասաց «Հայաստան» հիմնադրամի փոխտնօրէնը:

Արա Վարդանեանի վկայութեամբ՝ նախկինում եւս Լուիզ Սիմոն Մանուկեանը պահանջել է ծրագիր՝ գումարը տալու համար. - «Ուղղակի խնդիրն այն է, որ նախկինում հիմնադրամի ծրագրերը եղել են շատ աւելի ընդունելի ու հասկանալի ու համապարփակ, օրինակ՝ Հիւսիս - Հարաւ Լատոմայրուդին]: Ինքը անպայման ուզում է ստանալ մեր մօտից ծրագիր, որի դիմաց կը ծախսուի իր գումարը: Քանի որ Լուիզ Սիմոն Մանուկեանը տարիներ է վեր հիմնադրամին գումար է տրամադրել շինարարական ծրագրերի համար, ենթակառուցուածքի զարգացման, այս տարի տիկին Մանուկեանը որոշել է, որ ուզում է մասնակցել աւելի շատ սոցիալական զարգացման ծրագրերի, որը հիմնադրամի համար նոր ոլորտ է: Եւ քանզի դա նոր ոլորտ է, մեզ համար էլ մի քիչ աւելի շատ ժամանակ է պահանջուում»:

Հիմնադրամի փոխտնօրէնը վտանգաւոր համարեց ստացող լուրերի տարածումը, քանի որ եթէ անգամ խնդիրներ չկան, նման լուրերը կարող են բերել մեծ շեղումներ. - «Շատ վտանգաւոր է խաղալ Համահայկական Հիմնադրամի հեղինակութեան հետ: Յօդուածում պարունակուած սուտ տեղեկութիւնը կրճատում է մէկ դպրոց՝ Հայաստանում կամ Ղարաբաղում: Եւ ոչ թէ Հայաստանի ներքաղաքական վիճակն է դա կրճատելու, այլ լրագրողի գրածն է դա կրճատելու, քանի որ նրանից, որ Հայաստանում քաղաքական վիճակը միգրացիոն է մի քիչ սրուած է՝ մեր գումարները չեն պակասել եւ չեն պակասելու»:

Մասնաւորապէս, Արա Վարդանեանը վստահեցրեց, որ Լոս Անջելեսում, ուր Հայաստանի ներքաղաքական իրադարձութիւնների հետ կապուած բողոքի ակցիաներ էին անցկացուում, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գրասենեակը ապահովել է խոստացուած գումարների 99 տոկոս հաւաքագրում:

Միաժամանակ, փոխտնօրէնը դժուարացաւ մեկնաբանել հիմնադրամի գործադիր տնօրէն Վահէ Աղաբեկեանցի հաւանական հրաժարականի վերաբերեալ հրապարակումները՝ ասելով. - «Ես չգիտեմ, ես ոչ հաստատում եմ իր հրաժարականը, ոչ մերժում, որովհետեւ ես տեղեակ չեմ»:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՄՈՍԿՈՒԲԱՅՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԴՄԻՏՐԻ ՍԵԴԿԵԴԵԻ ԶԵՏ

Սերժ Սարգսեան Յունիս 24-ին Մոսկուայում հանդիպել է իր ռուսաստանցի գործընկեր Դմիտրի Մեդվեդեւի հետ:

Հանդիպման օրակարգում երկկողմ յարաբերութիւններին վերաբերող մի շարք հարցեր էին, այդ թւում՝ տրանսպորտի եւ էներգետիկայի բնագաւառներին վերաբերող, ինչպէս նաեւ կորոզիոնացուած համագործակցութիւնը միջազգային տարբեր կազմակերպութիւններում, մասնաւորապէս՝ Հաւաքական Անվտանգութեան պայմանագրի կազմակերպութիւնում, որտեղ Հայաստանը այս տարի նախագահելու է:

Երկու երկրների ղեկավարները քննարկել են նաեւ Լեւոնային Ղարաբաղի խնդիրը:

Հանդիպման սկզբին Սերժ Սարգսեանը Դմիտրի Մեդվեդեւին հրաւիրել է Հայաստան: «Հրաւիրում եմ ձեզ Հայաստան ցանկացած պահի, երբ ձեզ յարմար է», - ասել է նա:

Ռուսաստանի նախագահը շնորհակալութիւն է յայտնել հրաւերի համար:

Կրեմլում կայացած բանակցութիւնների արդիւնքներով երկու պետութիւնների ղեկավարները Համատեղ յայտարարութիւն են ընդունել, որն ընդգրկում է երկկողմ յարաբերութիւնների հարցերի լայն սպեկտր:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՆՐԱՅԻՄ

Շարունակուած էջ 1-էն

նադարան, իսկ ոստիկանները անկարող, տեղի տուին ու խաղաղ ցուցարարները հասան հանրահաւաքի վայրը:

Թէեւ Լեւոն Տէր-Պետրոսեանն ու ընդդիմադրութեան միւս ղեկավարները ներկայ էին Մատենադարանի առջեւ, հանրահաւաքը սկսաւ գրեթէ երկու ժամ ուշացումով, սակայն ժողովուրդը, որ բարձր տրամադրութեան մէջ էր, սպասեց բարձրախօսներու ժամանումին, որմէ ետք սկսան ելույթները:

Հանրահաւաքի ընթացքին խօսք առին ՆժԿ վարչութեան անդամ Հրաչեայ Սարգսեան, Պահպանողական կուսակցութեան անդամ Զաւէն Վարդանեան, ԺՌԿ փոխնախագահ Վարդան Գրիգորեան, հանրայայտ դերասան Երուստի Մանարեան, Քաղաքագէտներու Միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեան, նախկին քաղաքական բանտարկեալ, ազատամարտիկ, Շուշիի առանձնակի գունդի նախկին հրամանատար Ժիրայր Սէֆիլեան, «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ, ԱԺ պատգամաւոր Վարդան Խաչատրեան, ՄԴԿ պատնապետ Լիւդմիլա Սարգսեան, Համաժողովրդական շարժման ղեկավարներէն Լեւոն Զուրաբեան, Համաժողովրդական շարժման կենտրոնի մէկ այլ ներկայացուցիչ Դաւիթ Շահապարեան, Հանրապետութիւն կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան, ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեան եւ ապա Լեւոն Տէր-Պետրոսեան:

Ընդդիմութեան առաջնորդի ելույթի գլխաւոր հարցը քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման պահանջն էր: Ան յայտնեց, որ պատրաստ է մէկ անգամ եւս կոչ ընելու՝ ազատ արձակել քաղաքական բանտարկեալներուն, որմէ ետք ինք պատրաստ է երկխօսութեան: «Ես կոչ եմ անում միտինգի անունից Եւրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովին. եթէ մինչեւ Հայաստանի հարցի քննարկման օրը Սերժ Սարգսեանը ազատ արձակի անխտիր բոլոր քաղաքատարկեալներին, ապա ես կոչ կ'անեմ, այսօր էլ կոչ եմ անում Եւրախորհրդին՝ Հայաստանի նկատմամբ չկիրառել այն սանկցիան, որը սպառնացել է կիրառել»:

«Ինձ համար այս (Ենիսի-ի թիւ 1609) բանաձեւի մէջ միակը եւ գլխաւորը, որ այսօր յուզում է մեր ողջ ժողովրդին, քաղաքատարկեալների հարցն է», - ըսաւ Տէր-Պետրոսեան ու աւելցուց, թէ բանաձեւի միւս երկու դրոյթները, որոնք կը վերաբերին հանրահաւաքներու



Պատանի ցուցարարներ կ'ողջունեն Հայաստանի առաջին նախագահին

մասին օրէնքի փոփոխութեան պահանջին, ինքը այնքան ալ կարեւոր չի նկատէր, քանի որ «ինչպէս էլ փոխուեն օրէնքները, Հայաստանի իշխանութիւնը դրանք ոտնահարել եւ ոտնահարելու է»:

«Մինչեւ հիմա այդ օրէնքը եղել է անօրինական», - յայտարարեց նա: - «Յանկացած օրէնք հանրահաւաքների, երթերի, ցոյցերի անցկացման մասին հակասահմանադրական է»:

Առաջին նախագահը յայտնեց որ, քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումէն կը շահի եւ իշխանութիւնը, եւ երկիրը, որմէ ետք քաղաքական պայքարը կարելի է տեղափոխել քաղաքակիրթ հուն:

«Մինչեւ այդ հարցը չլուծուի», - դիմելով իշխանութիւններուն ան ըսաւ, - «մի մտածէք, որ ժողովուրդը կը յօգնի: Ընդհակառակը՝ դուք անում էք ամէն ինչ, որ ժողովուրդը աւելի ու աւելի բողոքի եւ զանգուածները աւելի ու աւելի խտանան ու մեծանան: յաջորդ հանրահաւաքում կէս միլիոն մարդ է լինելու»:

Խօսելով Մարտի 1-2-ի իրադարձութիւնները ուսումնասիրելու նպատակով ստեղծուած խորհրդարանական ժամանակաւոր Յանձնաժողովի մասին, առաջին նախագահը յայտնեց, որ իշխանութիւնը պիտի ընէ ամէն բան, որպէսզի այդ անկախ կոչուած յանձնաժողովը վերածէ ինդիպատակութեան:

Տէր-Պետրոսեան նաեւ բոլոր հացադուլաւորներուն յորդորեց դադարեցնել հացադուլը. - «Ես բոլոր հացադուլաւորներին կոչ եմ անում այլեւս հրաժարուել պայքարի այդ միջոցից: Պայքարի մեր միջոցը սա է՝ հանրահաւաքն է, որը տեղի է ունենալու այնքան ժամանակ, մինչեւ մենք չհասնենք մեր վերջնական նպատակներին»:

Լեւոն Տէր-Պետրոսեան իր խօսքի աւարտին յայտարարեց, որ յաջորդ հանրահաւաքը ծրագրուած է Յուլիս 4-ին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

ԱՂԳԱՅԻՆ

ՎԵՐՈՍՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

Աշխարհի վրայ բարիքը կ'արտադրուի անհամար ձևերով, գոյներով, բոյրերով ու ձայներով: Այդպէս են ծաղիկները, բնութեան հրաշալիքները, համայն տիեզերքը, նոյնիսկ մարդը իր լաւագոյն ներկայացուցիչներով ինչպիսիք են ազատագրական հերոսները, միտքի տիտանները, արուեստի հանճարները, ժողովուրդի ցաւերը իրենց ըրած աննման հոգիները:

Չարիքը, սակայն, գրեթէ միշտ ալ միագոյն եղած է եւ նոյն անհրապոյր կամ պժգալի կերպարանքն ունի: Հասարակական ու քաղաքական կեանքի մէջ այս չարիքը կը ստանայ անկարեկից բռնակալի խոժոռ, անբարտաւան, մարդատես կերպարը որուն ժպիտը կեղծ է, իւրաքանչիւր խօսքը՝ կեղծիք, ամբողջ գործը՝ զանգուածային չարագործութիւն կամ ոճիր: Կարելի է իրենց ազդեցութիւնները կամ անուանելը - Ներոն, Թալէթ, Հիթլեր, Մուսոլինի, Ֆրանֆո, Սթալին, Բերիա, Փինոչէ, Իտի Ամին, Չաուչէսքու, Մարքոս, Ալիւե (այս եւ որդի), Քոչարեան, Սերժ Սարգսեան: Ամբողջ աշխարհի եւ իրենց երկրի ժողովուրդին համար պատուհաս դարձած այս հոգեկան դիակները դժուար է իրարմէ զանազանել նոյնիսկ կէսօրուայ արեւի լոյսին տակ: Նոյն մահասփիւռ տիտղոս աշխարհակալութեան մութ ակումբի անդամներն են բոլորը:

Անկախացած Հայաստանի Հանրապետութեան նախագահական աթոռը ամբողջ տասնամեակ մը զաւթուեցաւ բռնապետ Քոչարեանի կողմէ: Իրեն յաջորդող հոգեզաւակը՝ Սերժ Սարգսեան, կարճ ատեն իր շուրջ տարածեց յոյսի տարտամ, անցողակի նշույլ մը: Երկար սպասելու պէտք չեղաւ յուսախաբուութեան համար: Յոյսի նշույլը մարեցաւ շուտով: Իր նախորդին վայել ամենէն տմարդի եւ ռիսկալ նոր ու «ճարպիկ» աշխատակիւրպի «յայտնագործութիւններով» Սերժ Սարգսեան ամենէն հասարակ առումով բռնապետի իր «բարի համբաւը» հաստատելու չուշացաւ: Իր առօրեայ մտահոգութիւններուն ամենէն վերը պահեց՝ քաղաքական բանտարկեալներու թիւը առաւելագոյնի հասցնելով նոր մրցանիշ կտրելու իր անխոնջ ճիգը:

Յաւալի է որ Սերժ Սարգսեան ընդմիշտ կորսնցուց իր ապօրինի իշխանութեան սկիզբը իրեն ներկայացած բացառիկ առիթը՝ հաւասարակշռուած միջոցառումներով լարուածութիւնը մեղմացնելու գործընթացին անցնելու համար: Թերեւս իր էապէս տկար դիրքի խոր գիտակցութիւնը պատճառ դարձաւ որ բիրտ ուժի դիմէ եւ զօրաւոր ըլլալու ինքնախաբէութիւնը բեմականացնէ՝ ամենէն առաջ ինքն ի՛ր համար: Ան արհամարհեց ե՛ւ ընդդիմութիւնը, ե՛ւ երկրին քաղաքացիները, ե՛ւ միջազգային հանրային կարծիքը: Զայլամի վարմունքով ու կիսագրագէտ գիւղապետի անշեղ յամբուութեամբ ան մինչեւ այսօր դեռ կը ցանկատեսէ թէ անպատիժ կրնայ խաբել իր ժողովուրդն ու համայն աշխարհը՝ աչքի փոշի ցանելով չորս դին, եւ ժողովրդավարութեան արտաքին ձեւական խաբկանքներ տարածելով իր շուրջ: Ան այնքան միտնուած է իր իշխանութեան բացարձակ անառարկելիութիւնը պահպանելու բազմատեսակ գեղձարարութիւններուն մէջ որ այլեւս կորսնցուցած է շիտակ խօսելու, դրականորէն գործելու եւ դիմացինի աչքերուն ուղիղ նայելու տարրական սովորութիւնները: Համերաշխութեան, անհասկացողութեան պատեր քանդել ու «միմեանց մտահոգութեան ու ցաւի նկատմամբ» անհաղորդ չըլլալու մասին կիրակնօրեայ դպրոցի բարոյախօսական ինքնանպատակ խօսքերը սնամէջ ձայներ կը մնան մինչեւ այսօր: Ան դեռ պատրաստ կամ մտադիր չէ ամենաչնչին տոկոսն իսկ գործադրելու՝ քմահաճօրէն քարոզած իր բովանդակագուրկ տափակութիւններուն: Նոյնիսկ ամենայն զգուշութեամբ չափուած ու ձեւուած իր ամենէն մեղրածոր խօսքերը յաճախ անսովոր ծանրութեամբ ու ներքին չկամութեամբ դուրս կը բերուին իր բերնէն, քանի իր ականջներուն ալ հաւանաբար կեղծ կը հնչեն անոնք: Իր բոլոր ուռուցիկ «ծրագիրները» եւս քողարկումներ են որոնց առաջնային նպատակն ու դերը՝ իր հովանաւորած աւազակապետական համակարգի քրէական յանցագործութիւնները եւ ոճիրները ծածկելն է:

Ճշմարիտ ու պարկեշտ գրեթէ ոչինչ կարելի է գտնել իր նորագոյն

առաջադրանքներուն մէջ: Այսպէս, իր վերջին համադրմանը ըլլալ յաւակնող Հանրային Խորհուրդ կոչուած դատարկախօսական թակարդը բնաւ չի միտիր հասարակական լուրջ խնդիրներու լուծման, այլ այդպիսի խաբկանք ստեղծելով պարզապէս կը փորձէ պարկեշտ հաստատ ընդդիմութեան դիրքերէն հեռացնել՝ ճանապարհի կէսին շփոթած կարգ մը անաբեկուած արուեստագէտները, անվտանգ մտաւորականները, հասարակական տատամսոտ գործիչները: Կառուցողական կամ խիզախ ոչինչ կայ այդ Խորհուրդի սայրնային պարապմունքին միանալուն մէջ: Ի վերջոյ մեռած ձուկերն իսկ կրնան հոսանքին հետը լողալու խաբկանքը տալ:

Բոլոր ժամանակներու մեծ ու փոքր բռնապետներու յատուկ ցնորամտութեամբ, Սերժ Սարգսեան ինքզինքը շրջապատած է՝ անհատականութենէ գուրկ քաղաքական այնպիսի գործակիցներով որոնք կամակատար կրաւորականութեամբ կը դառնան իր շուրջ: Տեղին է հարց տալ. Այս ծաղրածուներուն համար էր որ մեր հերոսական հաւատամարտիկները կուռեցան, գոհուեցան կամ հաշմանդամ դարձան - ծաղրածուներ որոնց անբարտաւանութեան գոհացում տալու համար այսօր անոնց ձեռքով բանտարկուած են որպէս... քրէական յանցագործներ: Աշխարհի բազմաթիւ երկիրներու մայրաքաղաքները խճողուած են նման պատեհապաշտներով որոնք ո՛չ սիրտ ունին, ո՛չ միտք, ո՛չ ողնասիւն եւ ոչ որեւէ սրբութիւն: Որոնց միակ սէրը իրենց ողորմելի անձն է եւ միակ սրբութիւնը՝ իրենց ախտաբանական հեշտասիրութեան գոհացումը կարելի բոլոր միջոցներով: Որոնք իրենց անօգուտ ու վնասակար կեանքի երկարացման համար պատրաստ են գոհելու ամենէն նուիրական գաղափարները, բարեկամութիւնները, սէրերը: Որոնք առանց նուազագոյն երկընտրանքի կրնան ոտնակոխել անմեղ մարդոց իրաւունքներն ու արժանապատուութիւնը: Որոնք սողալով ելած են իրենց ժողովուրդին շալակը եւ անպատկառ հեզնանքով կ'ոստոստեն շալակէ շալակ: Եւ որոնք ամբողջական անձնատուութեամբ ստրկաբար կը ծառայեն օրուայ գերիշիտող անարգ ուժերուն՝ ինչ ուղղութիւն ալ ներկայացնեն անոնք, ո՛վ որ ալ ըլլայ անոնց աստուածը կամ սատանան:

Մինչեւ վերջերս, Սերժ

Սարգսեանի իւրայատուկ հաշուարկներով, ձեռնտու պատանդներ կը նկատուէին քաղաքական բանտարկեալները՝ գորս կալանաւորելու համար կը բաւէր կիրարկել որեւէ անհեթեթ շինծու պատճառաբանութիւն - ընտրական կարգի խանգարում, իշխանութեան ներկայացուցիչի դէմ բռնութեան գործադրում, պետական իշխանութեան իւրացում, սպանութեամբ գողգորդուած զանգուածային անկարգութիւններու կազմակերպում: Եւ այլն: Հիմա այս հազուագիւտ գոհարներուն աւելցած է «Փոքրիկ Երեւանցի» նոր միջոցառումը, իբր թէ Երեւան-էրեբունիի հիմնադրութեան 2,790-ամեակի առիթով, Յունիս 20-ին, Երեւանի Ազատութեան հրապարակը: Այլ խօսքով, քաղաքապետարկեալ պատանդներու վրայ աւելցան մանկահասակ պատանդներ: Ասոնք անտարակոյս իշխանութիւններու ճարպիկ կարգադրութեամբ դպրոցներէն բռնի հաւաքուելիք անմեղ աշակերտները պիտի ըլլային ըստ ծրագրի: Ներկայ իշխանութիւններուն ծառայող վարձկաններու մզլոտած ուղեղիկներէն վիժած ինչպիսի մտային փայլատակում է ստիկա: Հապա՞ եթէ մեր փոքրիկ ուշիմ երեւանցիները չուզէին մասնակցիլ ծրագրուած խեղդատակութեան: Այն ատեն, երբ մեր առիւծասիրտ ոստիկանները «բերման ենթարկէին» գանձ, ինչպիսի՞ քրէական գործով պիտի ամբաստանուէին մեր չար (Սերժ Սարգսեանի նախասիրած ծամոններէն) փոքրիկ երեւանցիները: Պետական իշխանութեան իւրացում է: Իշխանութեան ներկայացուցիչի դէմ բռնութեան գործադրում: Թէ... զիրենք գառնուկներու հօտի տեղ դրած փնթի իշխանութեան դէմ արդար ընդվզում:

Արդեօք բազմիցս նախընտրելի չէ՞ր ըլլար որ «փոքրիկ երեւանցի» միջոցառման խաղերը տեղի ունենային անոնց սահմանուած Մանկական Այգիին մէջ, Ազատութեան հրապարակը ըստ օրէնքի յատկացուէր ազատ հայրենիքի համար պայքարող ընդդիմութեան համաժողովրդական հանրահաւաքին, եւ հանրապետութեան «նախագահը», մանր քինախնդրութիւններէն վեր մնալով, գբաղուէր իր դիրքի բարձրութեան վայել խնդիրներով - արդիւնաբերական տնտեսութեան իրա՛ւ (ոչ շպարային) վերաշխուժացումը, երկրի

Շար.ք էջ 19

1975-2008 33th ANNIVERSARY Life, Health, Group Health Disability, Long Term Care NEW YORK LIFE

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌՐԱԺԵՇՏ Է ԵՐՐԵՔ ՈՒՇ ԶԵ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՈ ՄԱՐՈՆԵԱՆ 818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ԶԵԿՈՅՑ

ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՒ ԻՐԱԲԱԲԱՆՆԵՐԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆՈՒՄ 2008 Թ. ՓԵՏՐՈՒԱՐԻ ԵՒ ՄԱՐՏԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՀՓԻՖԸ ԿՈՂՄԻՑ ՄԱՅԻՍԻ 7-12 ԻՐԱԿԱՆԱՑՈՒԱԾ ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԵՒ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՑ

Ընկերակցութիւնը գործում է 1901 թ.ի Օրէնքի համաձայն:

Ընկերակցութիւնը ստեղծուել է 1993 թ.ին, եւ միաւորում է հայագրի կամ հայկական հարցի նկատմամբ ոչ անտարբեր ֆրանսացի փաստաբաններին եւ իրաւաբաններին:

Ընկերակցութեան նպատակն է ցանկացած, մասնաւորապէս իրաւաբանական եւ դատական օգնութիւն ցուցաբերել Հայաստանին եւ սփիւռքին եւ իր ներդրումն ունենալ Հայաստանում իրաւական պետութեան կառուցման գործում:

ՀՓԻՖԸ-ը ընդունում է իր նպատակների հետ առնչուող ցանկացած խորհրդատուական կամ փորձագիտական առաքելութիւն:

ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Իր հիմնման պահից ի վեր ՀՓԻՖԸ-ը ունեցել է արտօնեալ յարաբերութիւններ իր հայաստանեան գործընկերների հետ, նպատակ ունենալով ամրապնդել փաստաբանական մասնագիտական գործունէութիւնը Հայաստանում, որն, օրական, յաճախ դժուարին եւ երբեմն նոյնիսկ թշնամական վերաբերմունքի պայմաններում, մասնակցում է իրաւական պետութեան հաստատմանը:

Այսպէս, մեզ դիմել են տարբեր, մասնաւորապէս Աշոտ Բլէյ-եանի, Վահէ Գրիգորեանի, Մատաղիս գիւղի երեք գինուորների, ինչպէս նաեւ Արման Բաբաջանեանի վերաբերեալ գործընթացների կապակցութեամբ դատական դիտորդական առաքելութիւններ կազմակերպելու միջնորդութեամբ:

2008 թ.ի Մարտի 18-ին, Հայաստանը պատուհասած ողբերգական իրադարձութիւններից յետոյ, Փարիզի փաստաբանների պալատի նախագահ, մեր գործընկեր Քրիստիան Շարիեր-Բուրնազելը նամակ է յղել ՀՓԻՖԸ-ի նախագահին, որով արտայայտել է իր մտահոգութիւնը եւ հարցրել է հնարաւոր միջամտութեան մասին: Միաժամանակ նա հաստատել է իր հրաւերն իր հայ գործընկերոջը, Ռուբէն Սահակեանին, 2008 թ.ի Դեկտեմբերի 4-6ը Փարիզի փաստաբանների պալատ համատեղ աշխատանքների վերակաման համար:

Ֆրանսայի փաստաբանների պալատի Ազգային Խորհրդի նախաձեռնութեամբ Հայաստանի փաստաբանների պալատի մասնագիտական էթիկայի յանձնաժողովի պատուիրակութիւնը ս.թ. Մարտի 30-ից Ապրիլի 5-ը հրաւիրուել է Փարիզ:

Այդ այցի ընթացքում, մեր հայ գործընկերները մեզ տեղեկացրեցին այն ծանրագոյն պայմանների մասին, որոնցում կազմակերպուելու էին Մարտի մէկի դէպքերին հետեւած բազմաթիւ ձերբակալութիւնների քրէական գործերով պաշտպանութիւնը:

Այս պայմաններում էր որ ՀՓԻՖԸ-ը հաստատեց նոր դատական դիտորդական առաքելութիւն կազմակերպելու իր ծրագիրը, որը եւ կայացաւ 2008 թ.ի Մայիսի 7-12-ը, Փարիզի փաստաբանների պալատի նախագահի աջակցութեամբ, որը առաքելութեան մասնակից բոլոր ֆրանսացի փաստաբաններին յղած իր ս.թ. Ապրիլի 25-ի նամակում արտայայտում էր իր համե-

րաշխութիւնը եւ ներգրաւուածութիւնը «աշխարհի ցանկացած կէտում գտնուող ծանր իրավիճակում յայտնուած գործընկերների պաշտպանութեանը, ինչպէս առհասարակ, մարդու իրաւունքների պաշտպանութեանը»:

Փաստաբանների պալատի նախագահ Քրիստիան Շարիեր-Բուրնազելն այսպիսով մեզ տուեց «լիազօրութիւն իրեն ներկայացնելու մեր հայաստանեան, մասնաւորապէս Հայաստանում մարդու իրաւունքների պաշտպանութեան համար պատասխանատու գործընկերների առջեւ» դրանով մեզ վստահեցնելով մեր առաքելութեան իրականացման շրջանակներում իր ամբողջական եւ անվերապահ աջակցութիւնը:

Այսպիսով դատական դիտորդական առաքելութիւնը, որին մասնակցեցին Փարիզի փաստաբանների պալատի անդամներ Ալեքսանդր Ասլանեանը, Վինսինի Բլանշին, Ալեքսանդր Գուլումձեանը, Սիլվի Փափագեանը, Անահիտ Փափագեանը, Ժերար Չոլաքեանը, տեղի ունեցաւ 2008 թ.ի Մարտի 7-12-ը:

ԶԵԿՈՅՑԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Այդ հինգ, ամբողջութեամբ մեր առաքելութեան նպատակներն նուիրուած օրերի ընթացքում, մենք հանդիպեցինք ՀՀ արդարադատութեան նախարարի, Մարդու իրաւունքների պաշտպանի տեղակալի, Հայաստանում Ֆրանսայի դեսպանի եւ հիւպատոսի, Հելսինքեան ընկերակցութեան նախագահի, հարիւրից աւելի կալանաւորուած անձանցից ութին, փաստաբանների պալատի նախագահի եւ մի շարք մեր հայ գործընկերների հետ:

Այդ կարճ ժամանակահատուածում մենք հնարաւորութիւն չունէինք հանդիպել ոչ բոլոր ներգրաւուած փաստաբաններին, ոչ բոլոր կալանաւորուածներին:

Մենք նաեւ հնարաւորութիւն չունեցանք հանդիպելու դատախազութեան ներկայացուցիչներին եւ լսելու մեղադրող կողմի դիրքորոշումները: Հետաքննութեան ընթացքում շփումները դատախազութեան եւ փաստաբանների միջեւ պէտք է իրականացուեն գրաւոր կերպով եւ Դատախազը միայն բացառիկ դէպքերում է իրաւասու սեփական հայեցողութեամբ շրջանցել այս դրոյթը: Բացի այդ, մեղադրական համակարգի վրայ հիմնուած հայկական քրէական ընթացակարգը չի նախատեսում փաստաբանների իրազեկում քննութեան ընթացքի վերաբերեալ մինչեւ վերջինիս աւարտը:

Մեր նախորդ դատական դիտորդական առաքելութիւնների ընթացքում, յարուցուած գործերը գտնուում էին արդէն դատաքննութեան ընթացքում եւ մենք խնդրում էինք հանդիպում դատախազութեան ներկայացուցիչների հետ: Ամէն անգամ մեր խնդրանքը կամ մերժուել էր, կամ արդէն նշանակուած հանդիպումը վերջին պահին չեղեալ էր արուում:

Չնայած արտայայտուած վերապահումներին, այն յարուցուած գործերը, որոնք մենք կարողացանք ծանօթանալ, իրենց մէջ պարունակում են այնպիսի դրուագները, որոնք մեզ թոյլ են տալիս անել

նախնական հետեւութիւններ եւ բարձրացնել մի շարք հարցեր:

Առաջին հերթին. Մենք համարում ենք, որ առաւել ազդեցիկ անձանց ձերբակալութիւնները եւ կալանաւորումները կատարուել են քրէական ընթացակարգի տարրական կանոնների խախտումով:

Այդ կերպ, պատգամաւորներ Յակոբ Յակոբեանը եւ Միասնիկ Մալխասեանը ձերբակալուել են Մարտի 2-ին մինչդեռ Ազգային ժողովը իրենց զրկել է պատգամաւորական անձեռնմխելութիւնից միայն Մարտի 6-ին:

Նմանակերպ Գլխաւոր դատախազի տեղակալ Գագիկ Զհանգիրեանի վերաբերեալ, մենք դիտարկեցինք, որ նրա ձերբակալութիւնը կատարուել է բռնի կերպով, մօտ քառասուն դիմակաւոր եւ զինուած անձանց կողմից, պայմաններում, որոնք յատուկ են յանցանքի վայրում բռնուած յանցագործի ձերբակալմանը, մինչդեռ մինչեւ ձերբակալումը նրա նկատմամբ որեւէ մեղադրանք չի յարուցուել:

Նախ, նրա դէմ սկզբնապէս քրէական գործ յարուցուել է միայն ապօրինի գէնք կրելու հիմքով այն դէպքում, երբ գէնքը նրա մեքենայի բեռնախցիկում յայտնաբերուել է միայն ձերբակալման պահին: Քանի որ գործում բացակայում է ձերբակալութեանը նախորդող ժամանակահատուածում որեւէ իրավախախտում կատարելը հաստատող փաստ, ապա վերջինիս ձեր-

բակալութիւնը եւ քրէական գործի յարուցումը, ակնյայտօրէն պատասխան են նախորդ օրը ընդդիմութեան հանրահաւաքի ժամանակ նրա հրապարակային ելոյթի:

Միաժամանակ, նրա կալանքի տակ պահելը օրէնսդրօրէն սահմանուած ընթացակարգային 72 ժամից աւելի եւ զիշերուայ կէսին դատական նիստի անցկացումն ազատութիւնից զրկելու օրինական ժամկէտից աւելի քան 4 ժամ ուշացումով, նախնական կալանքի սանկցիա տալու նպատակով, կազմում է ընթացակարգի ծանր խախտում, որը պէտք է անվերապահօրէն պատժուել վերաքննիչ դատարանի կողմից:

Այս գործելակերպը յանգեցնում են այն միտքին, որ տեղի ունեցածը ոչ այլ ինչ է, քան քաղաքական բնոյթի հետապնդումների դատական քողարկում իր ծայրայեղ կոպիտ դրսեւորումներով:

ԵՐԿՐՈՐԴԸ. Ինչ վերաբերուում է ներկայացուած յանձնարարական հանդիպող մեղադրանքների ծանրութեանը, այնպիսի մեղադրանքների ինչպիսին են յատկապէս «ուժով պետական իշխանութիւնը իւրացնել սահմանադրական կարգի խախտմամբ», օրէնքով, նման ծանր մեղադրանքի առաջադրումը պէտք է նախ եւ առաջ հիմնաւորուած լինի յստակ եւ շօշափելի փաստերով:

Շար.ը էջ 19

Գրաւուած Թուական
Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ
Սեպտեմբեր 21, 2008

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Armenian Independence Day FESTIVAL

To reserve your booth please call Nor Serount Cultural Association
 Չեր կողակներդ ապահովելու համար
 Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Աշակուբային Միութեան
(818) 391-7938

20-ԿԱԽԱՂԱՆՆԵՐ

ՔԱՆՆԵՐԸ ԻՆՉ ԿՐՍԵՆ ՄԵԶԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԻՆԱՆ

Ս.Գ.Հ.Կ.եան «20 կախաղաններ» ճանչցուած մարտիրոսացման հերթական տարեդարձն է որ կը նշենք: Աւելի քան ինը տասնամեակներ անցած են այդ ողբերգական, եւ սակայն հերոսական եղելութենէն, ոչ միայն անոնց պատկանած կուսակցութեան հաւատաւոր անդամները, այլ բոլոր անոնք որոնք ծանօթ են հայ ազատագրական պայքարի պատմութեան կը խոնարհին անոնց յիշատակին առջեւ:

Իսկապէս, 20-ներու դէպքը բացառիկ տեղ եւ կարեւորութիւն ունի հայ ժողովրդի երկարամեայ ինքնահաստատման եւ իբրեւ ժողովուրդ ազատ ապրելու դարաւոր փնտռումներէ մէջ:

Պատասխանելէ առաջ թէ ի՞նչ կ'ըսեն մեզի 20-ները այսօր, անհրաժեշտ կը նկատենք պատմական հակիրճ ակնարկ մը նետել թէ ինչո՞ւ պատահեցաւ 20-ներու նահատակութիւնը:

ԻՆՉ Է ՔԷՕՍԹԵՆՃԷԻ ԺՈՂՈՎԸ

Ռուսական Քէօսթէնճէ կոչուած քաղաքին մէջ կը գումարուէր Ս.Գ.Հ.Կ.ի Եօթներորդ պատգամաւորական ժողովը: Թէ ինչո՞ւ այս ժողովը պէտք է գումարուէր Թուրք-իսթանբուլ, արդարացում ունէր: Տխուր իրականութիւն մը կար այդ օրերուն, որ իթիթիհատ-Դաշնակցութիւն գործակցութիւնը անխուսափելի դարձած էր, եւ Ս.Գ.Հ.Կ.ը կ'ուզէր այդ առանցքէն դուրս ելլելու փորձ մը ընել:

Ժողովը տեղի կ'ունենար 1913 թուականին Սեպտեմբեր ամսուն: Կուսակցութեան աշխարհով մէկ տարածուած 109 մասնաճիւղերէն 59 կը մասնակցէին այդ ժողովին, ուր ներկայ էին կարեւոր դէմքեր, ինչպիսիք էին Տօքթ. Պէնէն, Ս. Սապահգիւլեան, Բ. Վարազդատ եւ ուրիշներ:

Կուսակցութեան այդ օրերու մտահոգութիւնները եւ հեռակայ քաղաքականութեան լոյսին տակ, առնուած որոշումները հետեւեալներն էին.

1. Կուսակցութեան դիրքը Թուրքիոյ հանդէպ համոզուած ըլլալով որ Օսմանեան ներքին քաղաքականութեան պատճառաւ, հայ ժողովուրդը կը գտնուի քայքայման շէմքին, կուսակցութիւնը կ'որոշէ «իր սկզբունքներէն բխող ոչ-օրինական (իլլեկալ) կերպով պայքար մղել, մինչեւ որ աւելի նպատակաւոր տնտեսական եւ քաղաքական պայմաններ ստեղծուին»:

Այս առաջին որոշումը շատ յստակ է նոր մեկնաբանութիւններու չի կարօտիր: Իթիթիհատական Թուրքիան հետզհետէ կը հետեւէր նախկին սուլթանական շրջանի քաղաքականութեան, որ կը միտէր հայ ժողովուրդի բնաջնջման: Իր ժողովուրդի ծառայութեան եւ փրկութեան նուիրուած կուսակցութիւն մը, ի տարբերութիւն ուրիշներուն, չէր կրնար ուրիշ որոշում մը որդեգրել քան իր որոշումը, որուն համար ալ գոհեց իր ղեկավարութեան աւագանին:

2. Քէօսթէնճէի պատգամաւորական ժողովի առած երկրորդ կարեւոր որոշումը կը վերաբերէր «ընդհանուր եւ մասնակի բարենորոգումներուն եւ Հայաստանի քաղաքական ինքնավարութեան»:

Այդ օրերու համար քաղաքական իրապաշտութեան եւ ազգերու եւ

ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքներու նկատմամբ առնուած այս որոշումը եւս ցոյց կու տայ կուսակցութեան քաղաքական եւ հասարակական հասունութեան բարձր աստիճանը: «Պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը, որպէս միակ միջոցը Հայաստանի մէջ ապրող թէ հայ եւ թէ միւս տարրերու հաշտ, խաղաղ, անվրդով գարգացման եւ յառաջդիմութեան համար»:

3. Կուսակցութիւնը իր օրակարգի վրայ ունէր նաեւ Հնչակեան կուսակցութեան բռնելիք դիրքը միւս կուսակցութիւններու հանդէպ: Այս օրակարգը գլխաւորաբար կը վերաբերէր իթիթիհատ վէթերագր կուսակցութեան, որ իր մէջ կը մարմնացնէր թուրք յարձակողական ազգայնականութիւնը՝ իր բոլոր ստորոգելիներով: Այս ժողովը խստիւ կ'արգիլէ իր բոլոր գործադիր մարմիններուն որեւէ գործակցութիւն ունենալ անոր հետ, եւ կ'որոշէ ամէն միջոցներով անողոք պայքար մղել անոր դէմ, զայն բոլորովին փշրելու եւ տապալելու համար:

Այս Յրդ որոշումը կը ցուցնէ կուսակցութեան քաջ, եւ անյողդող դիրքը թուրք իշխող բռնանակ կուսակցութեան վերաբերեալ, դիրք որ չհասկցան եւ մանաւանդ չուզէին որդեգրել հայ իրակախութեան մէջ գործող այլ կուսակցութիւններ, որպէսզի կարելի ըլլար միասնական դիրք մը ճշդել իշխող կուսակցութեան հայատեաց քաղաքականութեան դէմ:

4. Պատգամաւորական ժողովի 4րդ որոշումը նաեւ ունէր յատուկ կեցուածք մը, Տաճկահայաստանի եւ տաճկահայ դատին նկատմամբ:

«Յենեւով կուսակցութեանս ամբողջականութեան սկզբունքին վրայ, 7րդ պատգամաւորական ժողովը կ'որոշէ.

Տաճկահայ ժողովուրդի ու հայկական հարցի ներկայ ճգնաժամային վիճակը աչքի առջեւ ունենալով, իր աշխարհացրիւ բոլոր մասնաճիւղերուն կը պարտադրէ որ իրենց գործունէութեան արտայայտութեան մէջ, ֆիզիքապէս, նիւթապէս նախապատուութիւն տան Տաճկահայաստանին, տաճկահայ դատին»:

Ուրեմն, Քէօսթէնճէի համագումարին առնուած որոշումներն էին հետեւեալները:

1. Ոչ-օրինական (իլլեկալ) միջոցներով պայքար իթիթիհատի դէմ:

2. Պաշտպանութիւն ինքնավար Հայաստանի գաղափարին, եւ գործակցութիւն ոչ-հայ փոքրամասնութեանց հետ, քիւրտ, յոյն, եւ այլն:

3. Հրահանգ բոլոր Հնչակեան մասնաճիւղերուն գորավիզ կանգնել հայ դատին:

Մնացեալը ծանօթ է բոլորին: Մասնութիւն, 1914-ի ձերբակալութիւններ, 1915ի Յեղապահութեան փորձը, 20 հնչակեան ղեկավարներու կախաղան բարձրանալը, 1915 Յունիս 19-ին, հայութեան տարտղումը ի սփիւռս աշխարհի, եւ վերապրումի յաջող ճիգերը, ազգապահպանման աշխատանք, 70 տարի Հայաստանի խորհրդայնացում, եւ այսօր անկախ Հայաստան:

ԻՆՉ ԸՍԻՆ 20-ՆԵՐԸ ՄԵԶԻ
ԿԱԽԱՂԱՆԻ ՎՐԱՅԷՆ
Հազար անգամ կրկնուած, եւ սակայն միշտ այլ ազմէական կը

«ՓՇՐԻՐ ԺԱՆԳ ՇՂԹԱՆ...»

«Յո՞ն Արարատի փէշերուն պիտի գարնեց մեր վրաները: Վատ է ան որ ճշմարտախօսը լռեցնելու համար գնդակ կ'արձակէ: Մեր նուիրումը խորհրդային Յայաստանի հանդէպ պայմանադրական չէ՛ այլ Գաղափարական»:
ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ

ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Իմացեալ մահու կոչնակն ու կախաղանի անարցունք գողգոթան յաւերժացուցին սէրը՝ դէպ ժողովուրդ եւ գաղափար: Հզօրացաւ միտքը, յարութիւն առաւ հոգին եւ պայքարեցաւ «սերմը գիտակցութեան»:

Ճշմարտախօսը լռեցնելու, խօսքն ու շունչը կասեցնելու վախկոտներու գնդակները մնացին ապարդիւն՝ հզօր ուխտին դիմացել եւ տակաւին կը մնան այդպէս մինչեւ այսօր, ու մեր նուիրումն ալ կը մնայ նոյնը եւ անփոփոխ: Անխախտ հաւատքով կ'ընթանանք մինչեւ այսօր եւ այդ, մեր նուիրումը գաղափարական է եւ ոչ պայմանադրական: Թող ազգը խօսի՛, ան է ամենամեծ վկան, ճշմարտախօս է ու ծարաւ՝ արդարութեան ճրագին ու պայծառ հորիզոնին:

Հիմա, յոյս ունեմ, որ ես էլ էդ կանգուններից դուրս եկած, իմ էլ արուեստս խաչոււմ է Ռուսաստանի եւ Հայաստանի կուլտուրաներով եւ ինձ շատերը ասում են նրանց մէջ լինելով Ռուսերթ Ամիրխանեանն էլ, «Որ լսում եմ, գիտեմ որ դու ես գրել»: Եւ դա կոմպոզիտորի համար շատ կարեւոր ա: Դա անհատականութիւն ա ի հարկէ, ես ոչ մի դէպքում ինձ չեմ կպցնում էդ անուններին որ ես ասացի»:

Արուեստագէտ յօրինողը մեծ վարպետութեամբ ազուցելով բանաստեղծութիւններուն թելադրած տրամադրութիւնները գործի նպատակին հետ, որ է երկին նուիրումը հայրենի սօբրանօ Լուսինէ Զաքարեանի անմոռաց յիշատակին, իր խորհրդածութեանց եւ մտածողութեանց հետ կարողացած է հարուստ մեղեդիական դասոյթներով՝ ամբողջ

Շարք էջ 17

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHILAH DANCERS.

- authentic cuisine
- full hookah bar
- VIP membership
- full cocktail bar
- live belly dancing
- live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԶՈՒՄԱՃԵԱՆԻ «ԶԵՄԻՐԷ»Ի ԱՌԹԻ

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆ

Ահա: Բեմադրուել է մեծա- նուն կոմպոզիտոր Տիգրան Չու- խաճեանի «Զէմիրէ»ն: Կարճ եւ ամփոփ այս յայտարարութիւնը ուրախութեան եւ հիացմունքի զգա- ցում է ծնում իւրաքանչիւրի հո- գում՝ ով սիրում է հայ երաժշ- տութիւնը, ճանաչում է հայ դասա- կանի արժէքը: Սրա հետ մէկտեղ այս յայտարարութիւնը հարցա- կաններին մի շարք է առաջ քաշում որ բնական է նոյնքան՝ որքան այս ուրախութիւնը:

Ի՞նչ է, Զէմիրէի այս բեմադ- րութիւնը իրօք արատուց մի իրադարձութիւն է. եթէ այդպէս է, ուրախութիւն եւ հիացմունք ար- տայայտելու հետ մէկտեղ, հարցա- կաններին մի հիմնաւոր շարք է գոյանում՝ բովանդակութեամբ ցա- լոտ ու դանոտ... Հզորեմ այս գրութեան սկզբին որի՞ն առաջ- նութիւնը տամ, հիացմունք-ուրա- խութիւնը մանրամասնելու, թէ հարցականների խորքերը փորփո- րելուն:

Լոսանճեւրսեան հայ մամուլը լիովին արձագանգեց երեւոյթին, եւ բոլոր նիւթերի մէջ հիացական տոնը ազնիւ փորձ էր շնորհակալա- կան զգացումը մանրամասնելու, կոնկրետացնելու՝ բեմադրութեա- նը նուիրուած բազմաթիւ երա- ժիշտների, բեմականացումը իրա- գործած այլեւայլ մասնագէտների (նաեւ սիրողների) հասցէին: Մի- րով միանում եմ այս խանդավա- ութեանը, այնուամենայնիւ հար- ցականների ուղղութեամբ գնացող մտքի իմ փնտրտուքը իրենն է պահանջում: Իրօք, այս հարցերը կը գոյանային հայ մշակոյթին, հայ երաժշտութեանը նուիրուած որ- մէկի մօտ, ինքնաբերաբար: Միթէ՞ այսքան տարի ու այսքան ժամա- նակ էր պէտք, որ հայ մեծանուն դասականի գործը կեանք առնէր, բեմ բարձրանար: Ասածս մերկա- պարանոց յայտարարութիւնն է, հայ երաժշտութեան պատմութեանը գի- տակ մասնագէտները Չուխաճեանի ժառանգութեան մասին խօսելիս՝ յիշատակել են այս գործի անունը եւ գրեթէ այսքանով բաւարարուել են: Յամենայնդէպս, օպերայի անունը տուող չուխաճեանագէտի ականջի մէջ այն իբրեւ օպերա, իբրեւ ամբողջական կառուցի՝ գոյութիւն էր ունեցել: Ասել է, թէ մենք խուլ ենք եղել այս գործի հանդէպ, թէ՛ երաժիշտներս, եւ թէ՛ սիրողներս: Ինչպէ՞ս եւ ինչո՞վ բացատրել սա. «Զէմիրէ»ն անյաջող ծնունդ է եղել Չուխաճեանի կեանքում: Այս օպերայի լոսանճեւրսեան բեմադ- րութիւնը հարցը անպատեհ եւ անկիրթ դարձրեց: Եթէ այդպէս է, ի՞նչ է նշանակում 117 տարի լուրթեան մատնել հայ դասականի գործը՝ գրկելով նրան բեմական կեանքից: Զէ՞ որ այս օպերայի առանձին հատուածների խորհր- դային շրջանում կատարուած ձայ- նագրութիւնները գոյութիւն ունէին եւ «Զէմիրէ»ի որակի հաւաստումն են: Ասում եմ սա ու ինքս ինձ բռնում այն բանի վրայ, որ նորից ու նորից Չուխաճեանին վար եմ իջեցնում անփորձ սկսնակի աստի- ճանին, ասածիս տակ ենթադրուող աշակերտական քննութեան դնելով Չուխաճեանի երաժշտութիւնը, քա- նի որ Տիգրան Չուխաճեան անունը հիմնական փաստարկ ընդունելու փոխարէն, փորձում եմ շատերի պէս «Զէմիրէ»ի ինչ լինելը գնա-



հատել առանձին պատուիրների որակը վկայաբերելով: Այս պարա- դային է, որ ուզում եմ ասել՝ ինձ եւս մամլիչի տակ ճգնում է մշա- կութային դասական արժէքների նկատմամբ յաճախ գործող շուշլ մերժումի եւ պարծենկոտ չմահա- ւանութեան վատ սովորոյթը, որ արգելք էր ճանաչում մեզանում: Խտայացի պիտի լինէինք եւ օպե- րային ժանրը ծնող երաժշտական մշակոյթի տէրը պիտի լինէինք ու մի «Զէմիրէ» աւել կամ պակաս՝ բանի տեղ պիտի չդնէինք: Բայց մեր օպերայի պատմութիւնը Չու- խաճեանով է սկսում, նրա «Արշակ Երկրորդը» հաստատել է թէ՛ հեղի- նակի մեծութեան չափը, թէ՛ իր ստեղծածի բացառիկ կշիռն ու արժէքը:

Այս ներկայացումը դիտելիս տարբեր առիթներով էի հիաց- մունք ապրում, սակայն գլխաւորը ամբողջ ներկայացման ընթացքում ինձ հետ մնաց իմ զարմանքը առ օպերային ժանրի խորքերը թա- փանցած լինելու եւ այն տիրապե- տելու Չուխաճեանի հսկայական փորձն ու վարպետութիւնը: Օպե- րային դրամատուրգիայի հարցե- րին տեղեակ իւրաքանչիւր ոք գի- տի, թէ երաժշտական ինչպիսի նախադրեալների հիմքի վրայ է գոյանում բեմական շարժման բնա- կան ընթացքը, ինչպիսի յատկա- նիշներով օժտուած երաժշտութիւնն է ապահովում այն: Եթէ աւելի պարզ ասենք, ո՞ր երաժշտութիւնն է ունակ իր միջոց բեմական շար- ժում ծնելու: Գիտենք որ, առհա- սարակ շարժումը երաժշտութեան հիմնարար գոյավիճակներից է: Օպերային արուեստի երաժշտա- կան վերլուծութեանը տրուած միտ- քը գիտի, որ երաժշտական շար- ժում ստուծը ուրիշ մի բովան- դակութիւն է կրում օպերային ժանրի դէպքում: Այստեղ ընդհա- նուր երաժշտական շարժում աս- ուածը եթէ չապահովի բեմում իրականացուող փոփոխութիւննե- րի ուրիշը, իր մէջ չպարունակի բեմական կեանքի ամբողջ յարա- փոխութիւնը, կը դառնայ բեմա- կան գործողութեանը ծանրօրէն հետեւող, նրա ետեւից գնացող խոր- տակիչ ուժ, աւերելով թէ՛ ինքն իրեն, թէ՛ բեմի կեանքը:

Ամբողջ ներկայացման ըն- թացքին լսում ես, թէ ինչպէս Չուխաճեանի երաժշտութիւնը ան- վերջ ու անվերջ նիւթի ծաւալման նորանոր շերտեր է բացում իր մէջ, նորանոր ուրիշների շունչ առնում, ինչպիսի խտութեամբ են «մոն- տաժում» գործող անձանց նկա- րագիր դարձած մոտիւները, բե- մական իրադրութիւնները, եւ այս

ամբողջը այնպիսի թեթեւ ու ան- կաշկանդ հիւսուածքի ձեւով, որ բեմական շարժում դառնալիս քեզ իր մէջ է առնում, տանում իր ուրիշով, անակնկալների իր վայ- րի վերումներով: «Զէմիրէ»ի երաժշտութեան այս յատկութիւնն է, որ ապահովել է այս բեմադրութ- եան ամբողջ դրամատուրգիական ընթացքը: Ճիշտ է, որ սիւժէն անխարդախ եւ պարզ մի պատ- մութիւն է, բնորոշ՝ 19-րդ դարի օպերային ժանրին՝ ընդհանուր առմամբ: Ճիշտ է, որ սիւժէի մէջ բեմական շարժման նախադրեալ- ները գոյութիւն ունեն, սակայն դրանց կենդանութիւն տուող զար- կերակը նախ եւ առաջ երաժշ- տութիւնն է՝ անշուշտ: Զարկերակի այս կենդանութիւնը երկրորդա- կան դեր է վերապահում օպերայի սիւժէին, այն է՝ գրական հիմքին: Այս է պատճառը, որ ներակա-

յացումը դիտելիս քեզ գգում ես մասնակից ոչ միայն եւ ոչ այնքան սիւժէի ծաւալմանը, այլ օպերայի, ասել է թե բեմական գործողութե- ան եւ երգ-նուագով պատմութիւն արարելու արուեստին, որ գեղեցի- կի իւրովի տօն է:

Բեմ բարձրացած բոլոր եր- գիչ-երգչուհիները, տարբեր սերն- դի, այդ տօնը ապրեցին յիրաւի, վարակուելով Չուխաճեանի անն- ման երգ ու նուագից: Ահա երջա- նիկ կեանքի մի պատառ, որ առա- ջին անգամ բեմ բարձրացած երա- ժիշտը կամ պարողը երկար տարի- ներ իր յիշողութեան մէջ պիտի տանի: Ահա ներշնչանքի գեղեցիկ մի առիթ, որ աւագ սերնդի երգիչ- երգչուհիներն ապրեցին, վերանա- լով օրուայ առօրեականութիւնից: Եւ երբ օրերի ընթացքին ներկայ ունկնդիրների հոծ բազմութիւնը վայելեց «օպերա» կոչուող այս տոնը՝ Չուխաճեանի «Զէմիրէ»ն:

Ես շատ մօտիկից ակնատես եղա՝ բեմադրութեան աշխատանք- ներին: Տեսայ, թէ այս աշխատանք- ների կայացման սկզբնական փու- լում ինչպիսի բեռի տակ է փոր- ձում մտնել Վաչէ Պարսումեանը, որի անձնական նուիրումի եւ խան- դավառութեան ուժը վճռական դեր է ունեցել այս բեմադրութեան կեանքում: Տեսայ, որ երաժիշտ, երաժշտական կազմակերպիչ, ման- կավարժ, իմբավար Պարսումեանը փորձում է իր անձով փոխարինել ամբողջ մի երաժշտական խոշոր հիմնարկութիւն: Հիմնարկութիւն եմ ասում, որովհետեւ այս կամ սրան նմանուող մի մարմին պիտի

Շար.բ էջ 15

ALEP TRAVEL & TOUR
Հմուտ եւ փորձառու մասնագէտներու կարգադրութեամբ դուր կ'ունենաք յիշատակելի եւ անմոռանալի պտոյտներ
Ա.Ա.Ս.Բ.Ս. Օգոստոս 29 (7 գիշեր)
Սկսելով Սիաթլ քաղաքէն... Այցելութիւն ձունօ, Սֆակուէյ, քրէյս Արմ Ֆորտ, Բրիսն Բուրբրք եւ «Գանատա»:
Մէքսիկո Բիւնոս Այրես... Հոկտեմբեր 12 (7 գիշեր)
Սկսելով Լոս Անջելոս քաղաքէն... Այցելութիւն Գապո Սան Լուգաս, Մագաթլան, Բուրբո Վալէրթա
Արժէնթինա եւ Պարագուայի Նոյեմբեր 8 (14 օր)
Պուէնոս Այրէս «Praca De Mayo, Casa Rosada, Tango Show Dinner at Night5 San Telmo, Fela Market, Igacu Falls, Rio De Janeiro, City Tour with lunch, «Corcovado» and sugar loaf, West Rio De Janeiro «Beach» Sant Tereza
ԱրնիՄՏԵԱՆ ԲԱՐԻՊՅՈՒՆ Յունուար 3, 2009 (7 գիշեր)
Սկսելով Ֆլորիստայէն, այցելութիւն Օչո Բիոս «Ճէմէյֆա05 Կրէնտ Գէյմըն «Գէյմըն Կոզի», Գոգուէլ «Մէֆաիֆո», Բրիսնիս Գէյթ «Պահամաս»:
Եգիպտոս Փետրուար, 2009
Երուսաղէմ Ապրիլ, 2009
Նաեւ ունինք bus-ով պտոյտներ Կրէնտ Գէյմըն Յուլիս 14 (5 օր)
Լաս Վեկաս Յուլիս 8, 29 - Օգոստոս 5,19 (3 օր)
Լէյֆ Թաօ Օգոստոս 11 (5 օր)
Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 626-797 9469
www.Aleptour.com

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԶՈՒՄԱԾԵԱՆԻ «ԶԵՄԻՐԷ»Ի ԱՌԹԻ

Մարտնահանում էջ 14-էն

գրադուրեր 100-ամեայ լուսթեան փոշիների մէջ թաղուած մի ձեռագիր օպերա պեղելու, դրա մէջ գրական նիւթի մի շարք շերտեր համահարթեցնելու, ամբողջ պարտիտուրան նորոգելու, խմբագրելու, կատարման մակարդակի հասցնելու գործում: Եւ այս «մարմին»ը իր մէջ պիտի ունենար ոչ միայն բանասէրը, ոչ միայն պատմաբանը, այլ առ հասարակ ջուխաճեանագիտութիւնը ամբողջութեամբ: Քանի որ այս ասեցի, յաւելեմ նաեւ որ վերջին հինգ տարիները ընթացքին, Պարսումեանը բեմ է բարձրացրել նաեւ Չուխաճեանի «Քէօսէ Քեհիան», եւ «Լէպլէպիճին», եւ այս գիտական մի ամբողջ հիմնարկին փոխարինած միայնակ երաժիշտը, Չուխաճեանի «Զէմիրէ» պարտիտուրը մաքրել-խմբագրելուց յետոյ նուագավարի փայտիկը ձեռքն է առել՝ կենդանի հնչողութեան վերածելու այն: Իրօք, որ ահռելի ծաւալների աշխատանք է տարել իմ բարեկամը՝ Վաչէ Պարսումեանը, եւ լաւ է, որ օպերան բեմադրելու ընթացքին իր կողքին են եղել հրաշալի գործընկերներ, չուխաճեանական ամբողջ մի կոթող վերականգնելուն նուիրուած արուեստագէտներ-սիրողներ: Խորը յարգանքի են արժանի բոլորը մէկ առ մէկ:

Այս տեսակ հակաճառաւ մի աշխատանքի շուրջ մեզանում միշտ գոյացել է երբեմն շշուկներով, երբեմն մեծախօսութեան երանգով հարցականներ, որոնց պատասխանները տարբեր առիթներով առաւել կամ նուազ ծաւալին, խորքային թէ մակերեսի բացատրականներով տրուել են, ու միեւնոյն է՝ հարցը ամէն անգամ մէջտեղ է գալիս: Օրինակ՝ «Զէմիրէ»ն «հայկակա՞ն երաժշտութիւն է»: Նորից ու նորից հարկ է ասել. ճիշտ է՝ որ սա նախակոմիտասեան շրջանի մեծանուն կոմպոզիտորի գրչի արդիւնքն է, ճիշտ է՝ որ իտալական օպերայի եւ մասնաւորաբար վերդիի օպերաների հետ երաժշտալեզուական, գեղագիտական առնչութիւններ ունի, բայց սա հայ երաժշտի ստեղծածն է, մի արուեստագէտի, որ հաւատարիմ է իր ժամանակաշրջանին եւ միջավայրին, եւ մասնաւոր՝ իր լսարանին: Երանի կարողանայի այս պահին մէջբերել Մարտիրոս Սարեանի խօսքը, երբ Վարպետը հրաշալի հիմնաւորումներ է տալիս Յովհաննէս Այվազովսկու արուեստի ազգային պատկանելիութեանը:

Թուում է, թէ ծովն ու հայկական բնապատկերը իրար խորթ աշխարհամասեր են: Սարեանի տուած բացատրականները այնքան համոզիչ են Այվազովսկու ամբողջ ստեղծածը հայ գեղանկարչութեան օրգանական մասը նկատելու համար: Պիտի ուզէի, որ այս բացատրականը շատերս իմանայինք իբրեւ նման երեւոյթների ազգային պատկանելիութիւնը վերլուծելու, արժեւորելու սկզբունք, եւ այն կարողանայինք տարածել միւս արուեստների վրա եւս: Ահա այս հարցերը քննարկելիս, նորից անհրաժեշտութիւն է դառնում չիւշեցնել, որ հայ երաժշտական իրականութիւնը դարերով գտնուել է երկու աշխարհների՝ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ: Մենք ոչ միայն երկու կողմից ներառել ենք, այլ տուել ենք երկու կողմերին նաեւ: Առնելու եւ տալու երաժշտական

մտածողութեան մեր հարուստ փորձը նպաստել է մեր ինքնուրոյնութեանը եւ ինքնատիպութեանը: Խօսքը այստեղ փոխառութեան մասն օրինակներին չի վերաբերում, երբ հայանալ ու սիրուել կարող է մի դողոխիանական «Միծեռնակ», Հայաստանի պետական հիմն դարձած մի «Մեր հայրենիք», մի «Հինգալա»...

Խօսքը համակարգային մտածողութեան մասին է: Չլինէր համակարգային մտածողութեան այս որոշիչ յատկութիւնը, հազիւ թէ կոմիտասը մեր պարզ մեղեդիները բազմաձայնութեան սկզբունքներ գոյացնէր: Եւ այս բազմաձայնութիւնն էլ իր մէջ ունի եւրոպական տարբեր դարաշրջանների փորձը՝ «հարմոնիա», «պոլիֆոնիա» հասկացութիւնների համաձայն: Այս հիմքի վրայ է գոյացել ներկայի հայ կոմպոզիտորական դպրոցը որ ունակ է թէ՛ հայ սիմֆոնիա թէ՛ հայ կոնցերտ գրելուն...

Միւս կողմից, առ այսօր կենդանի ապրող երգեր են Արեւելքի մէջ ամբողջովին թաթախուն, օրինակ՝ Պաղտասար Դպիրի, Սայաթ-Նովայի եւ այս աւանդոյթով ստեղծուած երգերը: Կոմիտասը երաժշտական այս երկու թեւերի նկատմամբ հոգատար է եղել եւ երաժշտական «մաքրակենցաղութիւն»ը իրեն առաջնորդ չի կարգել Արեւելք-Արեւմուտք երաժշտալարաբերութիւնների հարցը շօշափելիս: Հետեւելով իր օրինակին, մենք եւս մեր երաժշտական մշակոյթի օրգանական մասը հանդիսացող թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւմուտքի յատկուութիւններով օժտուած երաժշտական մտածողութիւնը, եւ դրա արգասիքը հանդիսացող գեղարուեստական արժէքները, անշուշտ, մերը լինելու վրայ չպիտի կասկածենք: Լաւ կը լինի, որ մի օր այս կարգի հարցերի պատասխանը լիովին գիտակցուած լինի մեզանում, որ այլեւս չհարցնենք՝ «Զէմիրէ»ն հայկակա՞ն օպերա է, թէ՛ ոչ:

Յաւօք, ականատես ենք եղել մեծանուն կոմպոզիտորի արհեստավարժութիւնը կասկածի տակ դնելուն: Ճիշտ է որ, երաժշտութիւն գրելը կապուած է ակադեմիական յղուածութեան հասած տարբեր ճիւղերի հետ, ինչպիսին են օրինակ՝ հարմոնիան, պոլիֆոնիան, գործիքաւորումը, երաժշտական ձեւը, եւայլն: Այս եւ այլ տարբեր դիսկոմիսիաների ամբողջացմամբ է գոյանում մի պարտիտուրա, եւ այս տարբեր այսպէս կոչուած «դիսկոմիսիաներին» տիրապետելը պարտադիր պայման է եղել բոլոր ժամանակների կոմպոզիտորների համար: Ասում են որ, պոլիֆոնիայի իր մտածողութիւնը արթուն պահելու համար, վերդին ամբողջ կեանքի ընթացքին ֆուկայի աշակերտական վարժութիւններ է գրել: Այս առնչութեամբ ե՛ւս մի մանրամասն. հանճարեղ Շուբերտը իր գոյութեան վերջին տարիներին մի ուսուցիչ է գտել որի մօտ պոլիֆոնիայի իր փորձառութիւնը պիտի զարգացնէր: Հիմա գիտենք որ Շուբերտի երաժշտութիւնը կատարելութիւն է, որին որեւէ ուսուցիչ որեւէ բան չպիտի կարողանար յաւելել. հանճարեղ կոմպոզիտորին գիտելիք կամ փորձ ներարկելու պահին: Շուբերտն իրականում այդ ուսուցչի կարիքը չուներ:

Գալով մեր նիւթին, հարց տամ, ի՞նչն է կասկածի տակ դրուում երբ

փորձ է արւում Չուխաճեանի այս կամ այն պարտիտուրը վերագործիքաւորել: Ինչո՞ւ որեւէ մէկի մտքով չի անցնում պոլիֆոնիայի տեսակէտից պակասաւոր նկատել Շուբերտի այս կամ այն գործը: Անշուշտ բարբարոս պիտի լինէր միամիտը, որ հաւատալով Շուբերտի պոլիֆոնիայի դաս առնելու մղումին, բազմաձայնութեան այս ձեւը ներարկեր Շուբերտի գործերի մէջ:

Այս արծարծումները անհիմն չեն գոյանում Չուխաճեանի պարագային, քանի որ լսեցինք թէ ինչ արհեստավարժ գործիքաւորմամբ է հնչում «Զէմիրէ»ն, - այն էլ ոչ թէ առանձին դրուագների պարագային՝ այլ ամբողջութեամբ: Մեզանում գոյացած անցեալի որոշ արժէքներ «մշակելու» յաւակնտութիւնը գալով մի կոռուս եւս է կենդանի հնչողութեան բերուած Չուխաճեանի պարտիտուրան՝ որ վարպետ գրչի արդիւնք է, եւ վաւերական:

Գիտենք որ լուսահոգի Սակկիլարին, որի չիշատակի առաջ խոնարհուում եմ (միշտ սիրել եմ իրեն), ժամանակին «Զէմիրէ»ն վերագործիքաւորելու փորձ է արել: Այս անշուշտ իր անձնական նախաձեռնութիւնը չի եղել, Չուխաճեանի վարպետութիւնը կասկածանքի տակ առնողների նախաձեռնութիւնն է, որոնց ահա, Չուխաճեանն իր պատասխանն է տալիս Պարսումեանի օգնութեամբ:

Վաչէ Պարսումեանի կատարած աշխատանքի յատակ պատկերը ունենալու համար հարկ է տարբեր փուլերի բաժանել մի ամբողջութիւն, որ թերեւս սկսում է Չուխաճեանական ձեռագրի որոնում-հայթայթումով, ու երբ պարզուում է, որ մեզ հասած օպերայի ձեռագրի գրական մասը իրար շարունակաբար յաջորդող թերթ լեզուներով է՝ տաճկերէնով, ֆրանսերէնով, իտալերէնով, Պարսումեանը դառնում է Չուխաճեանական օպերայի գրական մասի վարիչ, մասնագէտ չիւշեալ երեք լեզուների, որ պիտի թարգմանի եռալեզու այս նիւթը՝ հայերէնի, ու սա դեռ բաւական չէ: Ով քիչ թէ շատ ծանօթ է գրական տեքստը երաժշտական տեքստի տակ տեղաւորելու ինդրին, ուր գործում է բառային վանկ-հնչիւն փոխ-կապակցութեան օրէնքը, նաեւ բառի շեշտի եւ երաժշտութեան շեշտի գուգակցման անհրաժեշտութիւնը, նա գիտի, թէ դա ինչ տարողունակ եւ յատուկ մասնագիտական պատրաստութիւն պահանջող գործ է:

Այս կարգի քանի-քանի մասնագիտական հմտութիւնների միջով անցնելուց յետոյ է, որ 100-ամեայ վաղեմութիւն ունեցող ձեռագիրը դրուում է աշխատանքային սեղանին բեմադրութիւն դարձնելուց առաջ: Լեզուի մասնագէտ (աւելի ճիշտ ասենք՝ լեզուների), խօսքերաժշտութիւն փոխ-կապակցութեան փորձառու, ձեռագրագէտ, երաժշտական խմբագիր եւ այսպիսի քանի-քանի մասնագիտութիւնների պիտի տիրապետի

մէկը, որ իր գոյութեան ընթացքում մէկ անգամ միայն բեմադրուած հակաճառաւ մի երաժշտական կառուց կենդանացնի: Երբ Պարսումեանը խօսում է Չուխաճեանի մասին, նրա անուան հետ եւ նրա շուրջ տեղի ունեցած այնպիսի պատմական մանրամասեր է մէջտեղ հանում, որ հասկանում ես՝ Չուխաճեանը եւ իր արուեստը անցել են Պարսումեանի ուսումնասիրութեան տասնամեակների հունով: Կա՞յ արդեօք մի թուղթ, մի գրութիւն, մի փաստաթուղթ, որ վերաբերում է Չուխաճեանին, եւ այն վրիպել է Պարսումեանի ուշադրութիւնից:

Հիմա իմ սեղանին է խմբագրուած, վերջնական տեսքի բերուած Չուխաճեանի «Զէմիրէ»ի կլավիրի եւ պարտիտուրի տպագիր օրինակը: Այսպիսի մի աշխատանք անել եւ մի ամբողջ օպերա դնել սեղանին, ապահովելով գիտական արժանահաւատութեան մակարդակ, ինքնին մի ամբողջ սխրանք կարող էր նկատուել: Իմ բարեկամը արանով չի բաւարարուել: Շուրջը ամբողջացրել է մի հակաճառական օրգանիզմ, որին մաս են կազմում բեմադրողը՝ երգիչ-երգչուհիներով, պարուսույցը՝ պարողներով, բեմին ծառայող նկարիչը, զգեստաւորողը, լոյսի մասնագէտը...

Հրաշալի է, որ Վաչէ Պարսումեանը ունի իր մտերիմները այս մասնագիտութիւններին տիրապետող մարդկանց շրջանակի մէջ: Այս ձեւով է, որ նա իր շրջապատին վարակում է ինկարկելու Չուխաճեանի ստեղծած բարձրարժէք գործը: Խնկարկումի այս ցնծութիւնը երեք ներկայացումների միջոցով լիովին բաժանեց լոսանձեւըսեան հանրութիւնը: Հրաշալի է, որ իր մտերիմների մէջ ունի իրեն հաւատացող, իրեն վստահող մարդիկ, որ կարող են նիւթական նեցուկ կանգնել այս գործին:

Անկասկած է, որ օպերայի բեմադրութեանը մասնակցած իւրաքանչիւր անձ (իր արածով մեծ կամ փոքր) արժանի է խոր յարգանքի եւ գնահատութեան: Ահա այսպէս Վաչէ Պարսումեանը իրականացրեց տարիների փայտաշառ ծրագիրը, մի քայլով եւս մօտեցնելով Չուխաճեանի ամբողջ օպերային ժառանգութիւնը բեմ բարձրացնելու յանդուգն երազանքը:

Այս գրութիւնը ամբողջացնելու համար ինձ մնում է մի հարց դնել: Պետական հովանաւորութիւն վաչելող, աշխատելու տարիների փորձ եւ աւանդոյթ ունեցող Երեւանի Սպենդիարեանի անուան Պետական Ակադեմիական Օպերային Թատրոնի աշխատակազմը եւ դեկավատրութիւնը պիտի չուզէ՞ր հայրենիք տեղափոխել Չուխաճեանի այս օպերան, որով թէ ինքը կը հարատանար, եւ թէ մեզ կը հարատանցնէր:

Չէ՞ որ «Զէմիրէ»ի չուխաճեանական ձեռագիրը եւ բեմադրուելու աշխատանքային նիւթը (կլավիր, ձայներ) մաքրուած-հրատարակուած վիճակով կան, պատրաստ տեղափոխուելու հայրենիք:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ՎԱՍՏ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ՎԱՍՏ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



MISSION WINE & SPIRITS

PRAVDA VODKA \$19.99 	JACQUES CARDIN VSOP COGNAC \$16.99 	SKYY VODKA \$8.99 	CAZADORES REPOSADO TEQUILA \$19.99 	GREY GOOSE VODKA \$21.49 
SMIRNOFF VODKA \$8.99 	ABSOLUT VODKA \$14.99 	JOHNNIE WALKER BLUE LABEL SCOTCH WHISKY \$24.99 	AL MIMAS ARAK \$11.99 	
HENNESSY XO COGNAC \$99.99 	IMPERIA VODKA \$17.99 	DON JULIO BLANCO TEQUILA \$24.99 	JOSE CUERVO ESPECIAL TEQUILA \$10.99 750ml \$20.99 1.75L 	JOHNNIE WALKER BLACK LABEL SCOTCH WHISKY \$19.49 750ml \$49.99 1.75L 
DON JULIO 1942 TEQUILA \$79.99 	CRISTALL VODKA 1.0L \$11.99 	COURVOISIER XO COGNAC \$79.99 	1800 REPOSADO TEQUILA \$17.99 	
BELVEDERE VODKA \$20.99 	DON JULIO AÑEJO TEQUILA \$35.99 	RUSSIAN STANDARD VODKA \$10.99 	JOHNNIE WALKER GREEN LABEL SCOTCH WHISKY \$36.99 	HENNESSY COGNAC \$20.99 VS \$32.99 VSOP  
JOHNNIE WALKER GOLD LABEL SCOTCH WHISKY \$46.99 	KETEL ONE VODKA \$18.49 	EL MASSAYA ARAK \$21.49 	COURVOISIER VS COGNAC \$18.99 	
GANTOUS & ABOU RAAD ARAK \$12.99 	MILAGRO SILVER TEQUILA \$15.99 	RUSSIAN SHOT VODKA \$8.99 	YOURI DOLGORUKI VODKA \$19.99 	PATRON SILVER or PATRON REPOSADO TEQUILA \$33.99  
GARANT VODKA 1.0L \$16.99 	CAPTAIN MORGAN SPICED RUM \$10.99 	BACARDI RUM \$9.99 	CZAR'S GOLD VODKA \$17.99 	
PUTINKA LIMITED EDITION VODKA \$26.99 	SEAGRAM'S 7 WHISKY \$9.99 	TWO FINGERS TEQUILA \$8.99 	SELECT WINES ASSORTED VARIETALS STARTING AT \$2.99 	

1785 E. Washington Blvd., Pasadena, CA 91104

(626) 794-7026 • (626) 794-7368

Near the corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm

www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 07/01/08 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded
 • Prices subject to change without notice • No checks or credit cards
 All items are 750ml in size unless specified.

ՀԱՅՐԵՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԵՐԱԺՇՏՈՒՅԻ ՍՈՖԱ ԱԶՆԱՌԻՐԵԱՆ

Շարունակում էք 13-էն

Չական եւ կտրատուած, որոնք այսպիսի գրեթե իւրապատկութիւններ են, ստեղծել երգեր լեցուն յուզականութիւնով ու արուեստագիտական (virtuoso) մակարդակով: Իսկ դաշնակի բաժինները կատարուած են խոհակամութեամբ, տրամաբանութեամբ, գիտականութեամբ, ճարտարութեամբ եւ զգացականութեամբ:

Գաղափար մը տալու համար այս ազնիւ յորինողի «Վոքալ Շարք» գործի մասին, մատնանշեմ մի քանի տարբեր տեսակի երեւոյթներ:

Ինչպէս շարային (serial) երաժշտութեան մէջ ձայնահնչիւնային շարքերը միշտ յարափոփոխ եւ տարբերակումային պէտքէ ըլլան, քննարկուող գործի պարագային, հեղինակը քիչ մը աւելի առաջ երթալով, այս մէկ մեծ շրջանակի մէջ առնուած հինգ քնարերգերէն իւրաքանչիւրը եւ իրեն յատուկ կառուցուածքով, նիւթի մշակման եւ զարգացման կերպերով, յուզական բովանդակութիւնով, մեկնաբանական պահանջներ թելադրանքներով, տարբեր ոճերու կիրարկումներով, գիտարուեստական կեդրոնախոյս նկարագրով, իրարմէ տարբերող հինգ երաժշտապատկերներ ստեղծելով հանդերձ, ան կարողացած է, բոլոր տարբերակումներն ու այլազանութիւնները կամարակապելով ու նարօտելով իրարու հետ, ստեղծել գեղեցիկ եւ բարձրարուեստ երաժշտական ժանեակ մը:

Որպէս ընդհանուր կանոն, մեկնաբանական նշումներու կողքին չեն դրուած կատարման արագութիւններու (tempo) նշումները, զանոնք ձգելով կատարողի հասկացողութեան ու ազատութեան:

Չեն գործածուիր նաեւ տողակցքի բանալիին առջեւ դրուող կիսաձայներու նշանները:

Այս բոլոր ծանօթութիւններէն ետք կ'անցնիմ ներկայացնելու «Վոքալ Շարք»-ը:

Հագիւ իր ներկայութիւնը զգալի դարձնող դաշնակի երկարաձիգ դաշնակներու ընկերակցութեամբ, ազատաշունչ, ողորկ եւ մեղմիկ դասութաւորումներով (phrasing) երգուող առաջին «Այդ երբ Այդքան Մերացար...» երգին կը հակադրուի յարատեւ կերպով 16-րդական ձայնահնչիւններու գործածութեամբ ձեռքերուած արագ ընթացող երկրորդ «Քո Մատները...» երգը, աւելի ուժեղ կատարումով:

Երկրորդ երգով հեղինակը զգալի կը դարձնէ դաշնակին ունեցած կարեւոր դերը այս երգին մէջ տալով անոր գերակշիռ տեղ: Երգը կը սկսի արագօրէն ընթացող 16-րդականներով կազմուած դաշնակի երեք հատածանի թէմային ներածականով մը, ուր հեղինակը կը գործածէ ostinato-ի գրեթե ուժը: Այս ոճը կը կիրարկուի երգի ամբողջ ընթացքին: Իսկ, երգին եղանակը թէեւ առաջինին նման վանկային է, սակայն իր նկարագրով՝ տարբեր անկէ: Այստեղ վանկերը հատ առ հատ պէտք է երգուին ու երգը յարաբերաբար առաջինէն աւելի գորեղ պէտքէ հնչէ: Այս երկին մէջ կը տեսնենք նաեւ հայեցակիցի ոճի հպանցիկ գործածութիւն:

Երգի յատկապէս վերջին երեք հատածներուն կը տեսնենք զուգահեռ հինգերորդներուն ազատ գործածութիւնը:

Յաջորդ «Քո Կեանքը Հարթ Ձի Անցել...»-ը, խորունկ ներշնչման արգասիք եւ մեծ հասկացողութեան

արդիւնք եղող այս սքանչելի քնարերգը, շարադրուած է ներքին երկու մասերով:

3/4 ամանակ ունեցող այս երկը կը սկսի դաշնակի միջին եւ վարի հնչամասերու վրայ տարածուող կիտաւոր ճերմակ դաշնակային հիմունքի վրայ յորինուած ութ հատածանի նախադասութեամբ մը, որուն երրորդէն մինչեւ ութերորդ հատածին վերջաւորութիւնը աջ ձեռքին տրուած է հայկականութիւն բուրոյղ մեղեդային գեղեցիկ գծագրութիւն մը: Առաջին այս մասը, առանց փոփոխութեան, երեք անգամ կրկնուելէ յետոյ, այս անգամ զուգորուած խտացած զգացականութեամբ լեցուն երգային դասութեանով, կը վերջանայ առաջին մասը:

Իրականութեան մէջ, գործին մասերու բաժնուած ըլլալը ցոյց տուող նշումներ չկան, սակայն, երկի կառուցային այլազանութիւնը, վկայելով հեղինակին արդած խորունկ եւ բարդ հոգեվիճակը, զգալիօրէն ցոյց կու տայ մտածողութեան եւ հետեւաբար, շարադրելու այլազան կերպերուն: Երբ բնագիրը կը հասնի «եւ բոլոր, բոլորը...» բառերուն կը սկսի երկրորդ մասը:

Այստեղ, բնագրէն բխած հոգեբանական փոփոխման հետ կը փոխուի նաեւ երաժշտութեան բանուածքը: Երգին գիծը պահելով իր կուռ նկարագիրը կը փոխադրուի աւելի բարձր ոլորտներու վրայ: Իսկ դաշնակը պահելով իր դաշնակային ոճը, քառորդական չափի դաշնակներու գործածութեամբ կը հակադրուի առաջին մասին կիտաւոր ճերմակ երկարաձիգ դաշնակներուն:

Յաջորդական փոխն ի փոխ, զիլ եւ թաւ 7-րդական, 9-րդական եւ 11-րդական դաշնակներու զանազան գործածութեամբ այս մասը կը հակադրուի առաջին մասին, միշտ միջակ եւ ցած հնչամասերուն մէջ մնալուն: Այլ խօսքով այս մասին հիւսուածքը տարբեր է:

Թէեւ երկրորդ մասը շատ հետաքրքրական ու փայլուն կերպով դէպի ուժեղ (forte) ընթացող, գործիքային նկարագիր ունեցող vocalization-ով կ'աւարտի բարձր A ձայնահնչիւնի վրայ եւ դաշնակի ընկերակցութիւնը կը վերջանայ D մեծալար շրջուած դաշնակով, քնարերգը սակայն, իր ամբողջական վերջաւորութեան կը հասնի պոչիկով մը, եթէ կ'ուզէք coda-ով մը, որ կը սկսի D մեծալար դաշնակի հատածով, որուն երգային գիծը ուրիշ բան չէ եթէ ոչ յիշուած բարձր A-էն ութեակ մը վարէն ընթացող A-ին վրայ մնալով երգումը, երգին նիւթը բնութագրող «Քո կեանքը հարթ չի անցել» նախադասութեան, համաձայն բնագրի հնչաբանական շեշտադրական կշռոյթին: Իսկ, պոչիկին դաշնակի ձախ ձեռքը թաւ եւ թաւագոյն A ձայնաուութեան մէջ պահելով եւ աջ ձեռքը ութեակ մը վառ իջեցնելով ու ապա, կիսաձայնային (chromatic) կերպով դէպի վար ընթացող աստիճանով, միշտ դաշնակներուն մեծալարային կառուցուածքը պահելով, A մեծալար դաշնակով հեղինակը կ'աւարտէ այս հրաշալի քնարերգը:

«Իջնող Երեկոյ-Լուսինէին» հոգեզմայլ երգը լաւագոյն գրաւականն է Ազնաուրեանի ունեցած սիրոյն ու ակնածանքին հանդէպ «Երգի թեւերով Աստուած վանք մտցնող»-ին, Լուսինէին:

Այս երգով, հեղինակը շատ խտացեալ բայց հարուստ հնարամ-

տութիւններով՝ vocalization-ով, ձայնային լայն հնչամասի օգտագործումով, կշռութային ճոխ այլազանութիւնով դաշնակի եթերայնութիւնով, աջ եւ ձախ ձեռքերու երկխօսութիւնով կարողացած է հասնիլ իր նպատակադրած կէտին ստեղծելով առ Աստուած բարձրացող երաժշտութիւն մը, ինչպէս Լուսինէի երբեմնի արօթք-երգերը:

«Վոքալ Շարք»-ի հինգերորդ եւ վերջին երգը «Իմ Պայծառ, Պայծառ Արեւս...» քնարերգն է:

Այս երգի երաժշտագրութեան նայելով անմիջապէս կարելի է կուսահել, որ Ազնաուրեան մտադրած է երգաշարի այս վերջին պատկերը ներկայացնել աւելի զուարթ նկարագրով, ինչպէս Լուսինէն էր իր ողջութեան ժամանակ: Այս պատճառաւ երգին տուած է աւելի թռչող եւ խաղային նկարագիր:

Երգի բանաստեղծութեան այնպէս կը թուի թէ՛ այդ մարդը իր սիրողին դիմելով է որ կը խօսի, բանաստեղծութիւնը շատ ու շատ տարիներ առաջ գրուած է եւ շատ հաւանաբար այ՛լ այլաբանական իմաստով, ոճով:

Պիտի համարձակիմ այս այդ մարդուն կերպարը փոխարինել, անցեալ տարի իր մահականացուն կնքած, անզուգական երգչուհի Լուսինէի ամուսինով՝ հայագէտ եւ երաժշտագէտ Խորէն Պալեանով ու այս անգամ փոխանակ երգին երաժշտութիւնը վերլուծելու, «Արեւ»-ը որպէս Լուսինէն ու այդ մարդը որպէս Խորէնը մտապատկերելով ու ըստ այնմ ներկայացնելով բանաս-

տեղծութիւնը, պիտի վերջացնեմ տաղանդաշատ երաժշտուհիին «Վոքալ Շարք» նուիրուած Լուսինէին փառաւոր ստեղծագործութիւնը:

Ահա Մկրտիչ Սարգսեանի բանաստեղծութիւնը.-

Իմ Պայծառ, Պայծառ Արեւ... Իմ պայծառ, պայծառ արեւ, Դու ինձ յախտեան այրել ես... Իմ պայծառ, պայծառ արեւ, Ինձ լոյս չես տալիս այլեւս...

Ծագում ես, սակայն իմը չես, Օտարացել ես, հիմը չես... Քո լոյսի սովոր քո ճորտն եմ, Ա՛խ, մի՞թէ քո խորթն եմ... Քեզ ինձ տանջելը զաւեշտ է,

Այնքան դիւրին է ու հեշտ է... Սիրի ինձ, պահիր իմ ջանս, Սիրի ինձ, պահիր իմ ջանս. Թէ ես չլինեմ այլեւս, Փառքը ո՞վ կ'երգի, արեւս...

Յուսամ, այսքանով փոքր ի շատէ գաղափար մը կարողացայ տալ ընթերցող հասարակութեան Հայաստանի արդի երիտասարդ երաժիշտ ստեղծագործներէն տաղանդաւոր եւ շնորհալի Տիկ. Սոֆա Ազնաուրեանի կեանքին ու երաժշտարուեստին մասին:

Տակաւին շատ բան կարելի է ըսել Տիկ. Ազնաուրեանի գործերուն մասին, յատկապէս Mono-opera-ներուն մասին: Սակայն, այսքանով բաւարարուելով, կը վերջացնեմ յօդուածս մաղթելով Տիկ. Սոֆա Ազնաուրեանին ստեղծագործական առողջ ու արգասաբեր կեանք: (Վեբը)

ՅՈՒՆԻՍԻԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐՈՂ
ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ
ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Կազմակերպութեամբ՝
Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան

Հովանաւորութեամբ՝
Գեորգ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմին

Բացման Խօսք՝
ՏՕԳԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Բանախօսներ՝
ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ
ԴՈՎՏ. ԳԱՌՆԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ
Դրուագներ Սարոյեանի Կեանքէն
ԹՈՐԳՈՄ ՓՈՍԹԱՃԵԱՆ
Նախագահ Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան

Հանդիսավար՝
ԼԻԼԻԹ ՔԷՀԷՆԱՆ

Գեղարուեստական Բաժին
Ընթերցումներ Ուիլիըմ Սարոյեանի Գործերէն

Կիրակի, Յուլիս 13, 2008 Կ. Ե. Ժամը 5:00ին
Հայց. Եկեղեցւոյ Առաջնորդարանի
«Գալայնեան» Սրահին մէջ
3325 Glenoaks Blvd. Burbank CA 90504

Մուտքը ազատ

ՄԱՐՉԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆուտպոլի Հայաստանի առաջնութեան 11-րդ տուրում առաջատար «Արարատ»ը սեփական հարկի տակ մեծ դժուարութեամբ 2:1 հաշուով յաղթեցին Գիւմրիի «Շիրակ»ին:

Տուրի կենտրոնական հանդիպումը կայացաւ «Նաիրի» մարզադաշտում, որտեղ մրցեցին «Փիւնիկ»ը եւ «Միկա»ն: Հանդիպումը աւարտուեց 1:1 հաշուով:

Փոխ-ախոյեան «Բանանց»ը 1:0 հաշուով առաւելութեան հասաւ «Ուլիս»ի նկատմամբ:

Կապանում տեղի «Գանձասար»ը 3:1 հաշուով առաւելութեան հասաւ Ետնապահ «Կիլիկիա»յի նկատմամբ:

Ֆուտպոլի Հայաստանի առաջնութիւնում կայացան յետաձգուած 2 հանդիպում, որոնցից մեծ հետաքրքրութիւն էր առաջացրել «Արարատ» եւ «Փիւնիկ» հանդիպումը որը աւարտուեց 0:0 հաշուով:

Յետաձգուած միւս խաղում մրցեցին «Շիրակ»ը եւ «Բանանց»ը: Գիւմրիում կայացած այս խաղում առաւելութեան հասան հիւրերը 2:0 հաշուով:

11-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

	Խաղ	Յաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Արարատ» Երեւան	10	8	1	1	20-8	25
«Միկա» Աշտարակ	9	6	2	1	15-6	20
«Փիւնիկ» Երեւան	9	5	3	1	10-4	18
«Բանանց» Երեւան	9	5	1	3	11-6	16
«Գանձասար» Կապան	10	3	2	5	13-14	11
«Շիրակ» Գիւմրի	11	3	1	7	7-15	10
«Ուլիս» Երեւան	10	3	0	7	8-10	9
«Կիլիկիա» Երեւան	10	1	0	9	6-27	3

Ինտերտոտոյի գաւաթի խաղարկութեան առաջին փուլի առաջին խաղում Երեւանի «Միկա»ն մրցեց մոլդովական «Տիրասպոլի» հետ: «Միկա» մարզադաշտում կայացած հանդիպումը աւարտուեց 2:2 հաշուով, թէեւ հայ ֆուտբոլիստները առաջին կէսից յետոյ յաղթում էին 2:0 հաշուով:

Այս թիմերի միջեւ պատասխան հանդիպումը կը կայանայ Յունիսի 28-ին Տիրասպոլում:

ԾԱՆՐԱՍԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ 3 ԱՐԾԱԹ, 1 ԲՐՈՆՁ

Կոլումբիայի Կալի քաղաքում աւարտուեց ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնութիւնը: Հայաստանի հաւաքականի կազմում մրցաշարին մասնակցեցին միայն տղաները:


Գերծանր քաշային կարգում 18-ամեայ Ռուբէն Ալեքսանեանը, պոկում վարժութիւնում բարձրացնելով 185կգ, գրաւեց 3-րդ հորիզոնականը, սակայն հրում վարժութիւնում բարձրացնելով 227կգ՝ հայ ծանրորդը երկամարտի 412կգ արդիւնքով դարձաւ աշխարհի փոխախոյեան: Այս քաշային կարգում մրցակցութիւնից դուրս էր ուռւ ծանրորդ Եւգենի Պիսարեւը, որը երկամարտում ցոյց տուեց 426կգ արդիւնք:

105կգ քաշայինների պայքարում բրոնզէ մեդալի արժանացաւ Սեւակ Սահակեանը: 20-ամեայ ծանրորդը երկամարտում ցոյց տուեց 376կգ արդիւնք՝ 1 կգ-ով առաջ անցնելով Ռուսաստանը ներկայացնող Դաւիթ Բեջանեանին: Այս քաշային կարգում ախոյեան դարձաւ Եգիպտոսի ներկայացուցիչ Մոհամեդ Ռահմանը, որը երկամարտում բարձրացրեց 383կգ:

Իսկ մինչ այս աշխարհի փոխ-ախոյեան էին դարձել 69կգ քաշային Առաքել Միրզոյեանը եւ 84կգ Արամ Ադրիկեանը:

ՀԱՅ ՀՈԿԵՅԻՍԵԸ NHL-ՈՒՄ

Հոկեյի Հայաստանի հաւաքականը իր կազմում կարող է ունենալ NHL-ում հանդէս եկող աստղ: Այս մասին «Ա1+»-ին յայտնեց Հայաստանի Հոկեյի ֆեդերացիայի նախագահ Կարէն Խաչատրեանը:



Խօսքը օրերս «Ատլանտա»յի հետ պայմանագիր կնքած 17-ամեայ Զակ Բոգոսեանի մասին է: Քանատահայ այս հոկեյիստը, նախորդ մրցաշրջանում հանդէս գալով Օնտարիոյի «Պիտերսբորո Պիտս» թիմում, դարձաւ իր թիմի գլխաւոր ումբարկուն, թէեւ հանդէս է գալիս պաշտպանութիւնում: Բացի իր տպաւորիչ ատլետիկ տուեալներից՝ Բոգոսեանը նաեւ սահելու հիանալի տեխնիկա ունի, որը երիտասարդ պաշտպանների մօտ այնքան էլ յաճախ չի հանդիպում: Ազրեանիկ այս հոկեյիստի գլխաւոր թերութիւնը շտապողականութիւնն է, սակայն անձամբ Բոգոսեանը դա լաւ գիտակցում է եւ աշխատում է այդ ուղղութեամբ: Յաջող հանդէս գալով «Պիտերսբորո Պիտսում» Բոգոսեանը յայտնուեց NHL-ի 2008թ դրաֆտում (իրենց առաւել լաւ դրսեւորած երիտասարդ հոկեյիստներ, որոնք հնարաւորութիւն են ստանում հանդէս գալ ուժեղագոյնների մրցաշարում), որտեղ զբաղեցրեց պատուաւոր 3-րդ հորիզոնականում:

Հայաստանի հոկեյի ֆեդերացիան մտադիր է տաղանդաւոր հոկեյիստին հրաւիրել Հայաստանի ազգային հաւաքական: Ըստ ՀՀՖ-ի նախագահ Կարէն Խաչատրեանը հաւաստումը դա այնքան էլ հեշտ չէ. «Բոգոսեանը պէտք է ունենայ երկօրոց քաղաքացիութիւն, որպէսզի իրաւունք ստանայ հանդէս գալ Հայաստանում: Նա հանդէս չի եկել որեւէ այլ երկրի հաւաքականում եւ իրաւունք ունի մեր ընտրանու կազմում մասնակցելու պաշտօնական հանդիպումների:

«ԵՈՒՐՈ 2008»-Ի ԱԻՐՏԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ ԹՈՒՐՔԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ՍՊԱՆԻԱ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՔԱՌԵԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՊԱՅՔԱՐԸ

«Եուրո-2008»-ի կիսաեզրափակիչում կը հանդիպեն Գերմանիա - Թուրքիա, եւ Ռուսաստան-Սպանիա զոյգերը:

Գերմանիայի հաւաքականը դարձաւ «Եուրո-2008»-ի կիսաեզրափակիչ առաջին մասնակիցը՝ Շուալինշտագերի, Քլոզէի եւ Բալակի գոլերի շնորհիւ քառորդ եզրափակիչում 3:2 հաշուով յաղթելով Պորտուգալիային:

Քառորդեզրափակիչում ամենամեծ անակնկալը մատուցեցին ռուսները, որոնց պայքարից դուրս թողեցին Հոլանդայի հաւաքականին: Հանդիպման հիմնական ժամանակը աւարտուեց 1:1 հաշուով, իսկ լրացուցիչ ժամանակում խփելով 2 գնդակ Գուս Հիդինկի սաները առաւելութեան հասան 3:1 հաշուով:

Կիսաեզրափակիչում ռուսները կը մրցեն Սպանիայի հետ, որին խմբային մրցաշարում գիջել էին 1:4 հաշուով: Սպանացիները քառորդեզրափակիչում պայքարից դուրս թողեցին աշխարհի ախոյեան Իտալիայի հաւաքականին: Հանդիպման հիմնական եւ լրացուցիչ ժամանակը աւարտուեց գոլազուրկ ոչ-ոքիով, իսկ նետխաղեայ 11 մետրանոցները աւելի դիպուկ իրացրեցին Սպանիայի հաւաքականի խաղացողները:

Չորեքշաբթի օրը կիսաեզրափակիչի հանդիպումին Գերմանիա 3-2 հաշուով յաղթելով Թուրքիային նուաճեց աւարտական մրցումին մասնակցելու իրաւունքը:

ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԻ ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

IBF-ի վարկածով միջին քաշային կարգում աշխարհի ախոյեան Արթուր Աբրահամը եւս մեկ անգամ յաղթեց կոլումբիացի էդիսոն Միրանդային, որը այս մրցամարտում ցանկանում էր ռեւանշի հասնել նախկինում կրած պարտութեան համար:

Առաջին 2 ռաունդներում Աբրահամը պասիւ էր եւ հիմնականում պաշտպանուէր էր, սակայն 3-րդում մի քանի դիպուկ հարուած կատարեց: 4-րդ ռաունդում Միրանդան յայտնուեց նոկդաուտում, սակայն որոշեց շարունակել հանդիպումը: Սակայն Արթուրը թոյլ չտուեց նրան վերականգնուել եւ եւս 2 նոկդաուտներից յետոյ մրցամարտը դադարեցուեց եւ Աբրահամին շնորհուեց յաղթանակ: Հանդիպումից յետոյ Միրանդան խոստովանել է, որ թոյլ էր մրցակցից. «Նա շատ լաւ էր պատրաստուել ռեւանշին եւ այսօր շատ ուժեղ էր: Ես ոչինչ չկարողացայ անել: Նա իսկական ախոյեան է»:

Այժմ Արթուր Աբրահամը կը նախապատրաստուի Ռաուլ Մարկեսի հետ մրցամարտին, որտեղ պէտք է պահպանի ախոյեանական տիտղոսը, այնուհետեւ կարող է վերադառնալ ԱՄՆ եւ անցկացնել հանդիպում WBC եւ WBO վարկածներով ախոյեան Կելի Պավլիկի հետ:



ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 40-ԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 8-էն

րայի, դաշնակահար Շահան Արծրունիի եւ թաւջութակահար Անի Ազնաւուրեանի:

Մայր Տաճարը գրեթէ ամբողջութեամբ լեցուած էր արուեստասէր հանդիսականներով:

Մայր Տաճարի դասին մէջ, պատուանդանի մը վրայ գետեղուած էր պոչաւոր դաշնամուր մը: Յայտագիրին բացումը կատարեց վարպետ դաշնակահար Շահան Արծրունի, որ հնչեղային կատարեալ նորութեամբ, բարձրարուեստ ինքնավստահութեամբ դիւային արագութեամբ մեկնաբանեց Արամ Խաչատրեանի կարգ մը գործերը:

Զարմանահրաշ ստիբանո Լուսին Ամարա, այժմ 83 տարեկան, շարունակեց յայտագիրը օփերային երկու արիաներով: Անոր ձայնային ջինջ առողանութիւնը, յստակ ելեւէջներն ու համոզիչ մեկնաբանութիւնները կրնան օրինակ հանդիսանալ երիտասարդ արուեստագէտներուն: Յայտագիրի ավարտին՝ ան երգեց Ռոմանոս Մելիքեանի դաուն տրամադրութեամբ «Վարդը», Կոմիտասի սրտազեղ «Կուռնկ»ը եւ «Դլէ Դլէ Եաման»ը, ինչպէս նաեւ էտկար Յովհաննէսեանի ոգեւորիչ

«Երեւան-էրեբունի»ն:

Թաւջութակահար Անի Ազնաւուրեան, որ նորեկ մը կը նկատուի հայկական շրջանակին մէջ, սկսաւ իր յայտագիրը Արամ Խոստոյեանի «Սոնատ»ով՝ յորինուած մենանուագ թաւջութակի համար: Անոր նուագէն ի յայտ կու գար որ ան կը սիրէ թաւջութակ նուագել եւ իր ոգեւորութիւնը գոլգորդուած է իր արուեստին: Անոր թէքնիք վարպետութիւնը եւ երաժշտական հասկացողութիւնը մեծապէս կ'ազդեն անոր կատարողական արուեստին վրայ: Ան շարունակեց յայտագիրը՝ նուագելով էդվարդ Միրզոյեանի խոհանարան «Փոէմ»ը եւ Աղեքսանդր Յարութիւնեանի կորովի «Յիմբոմբ» թիւ « գործերը:

Շահան Արծրունի, որ համակարգողն էր երաժշտական այս յայտագիրին, նուագակցեցաւ Լուսին Ամարայի եւ Անի Ազնաւուրեանի:

Յաւարտ յայտագիրի գործադրութեան՝ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան շնորհակալութիւն յայտնեց արուեստագէտներուն եւ ներկաներուն, նոյն ատեն չի չեց որ Մելիքեանի թիւն Օփերայի փայլուն աստղերէն Լուսին Ամարան իր մասնակցութիւնը բերած է Ս. Վարդան Մայր Տաճարի օծման արարողութեան:

ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՒ ԻՐԱԻՎԱԲԱՆՆԵՐԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարտնակուած էջ 6-էն

Սակայն այն տեղեկատուութեան մէջ, որը մենք կարողացանք հաւաքել, այդ փաստերը մեծապէս բացակայում են:

Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի պետ Ալեքսանդր Արզումանեանն արդէն երկամսեայ ազատագրկումից յետոյ դեռեւս որեւէ դատաքննիչի հետ չէր հանդիպել եւ անտեղեակ էր իր ազատագրկման յստակ պատճառից:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Ալեքսանդր Արզումանեանը արդէն մէկ անգամ դատական կարգով հետապնդուել է եւ ենթարկուել բազմամսեայ ազատագրկման այն պատճառով, որ իր բնակավայրում գտել են մի քանի տասնեակ հազար ԱՄՆ դոլար, որոնց անօրինական բնոյթը սակայն այդպէս էլ չեն կարողացել հաստատել: Նշուած գործը դեռ փակուած չէ:

Ինչ վերաբերում է «յաղթելու ենք» արտայայտութեանը, որը հանրահաւանքներից մէկի ժամանակ արտասանուել է ՀՀԾ նախագահ Արարատ Զուրաբեանի կողմից, եւ որի պատճառով նա հետապնդուում է, ապա այն շատ դժուարութեամբ կարելի է որակաւորել որպէս ուժով պետական իշխանութիւնը իւրացնելու փորձ քանի որ խօսքը գնում է նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի պատասխանների վրայ գրուած կարգախօսի մասին:

Նոյնկերպ բազմաթիւ տեսա-ժապաւէնները փաստում են այն, որ Աժ պատգամաւորներ Յակոբ Յակոբեանը եւ Միասնիկ Մալխասեանը Մարտի 1-ի հանրահաւաքի ժամանակ խաղացել են խաղաւարտ դեր, վարքագիծ, որը քիչ համատեղել է պետական յեղաշրջման փորձի հետ, եւ որը հաստատուած է մեր հանդիպման ժամանակ կայացած խօսակցութեամբ:

Բոլոր այս փաստերը աներկբայօրէն հաստատում են հետապնդումների քաղաքական բնոյթը:

Նշուած առաջին երկու կէտից բացի՝ տեղին կը լինի աւելացնել բռնութեան դէպքերը, որոնք բնորոշ էին ձերբակալութիւնների իրականացման ընթացքին, ինչպէս նաեւ նախնական կալանքի ժամանակահատուածին:

Դաւիթ Առաքելեանի դէմքի վրայ, ձախ աչքի մօտ, նոյնիսկ իր ձերբակալութիւնից երկու ամիս անց կայացած մեր հանդիպման պահին, կար նշանակալից սալջարդ:

Նրան ձերբակալել են Մարտի 1-ի առաւօտեան երբ նա հեռանում էր Օպերայի հրապարակից, ապա երեք այլ անձանց հետ միասին նետել են ոստիկանական յատուկ ստորաբաժանման մեքենայի մէջ, որտեղ նրանց հարուածել են ոտքերով եւ մահակներով, որի հետեւանքով նրա կողոսկրերը ջարդուել են:

Հարկ է նշել նաեւ, որ Մարտի իրաւունքների Պաշտպանի գեկոյցում տեղ գտած, դէպքերին վերաբերող օրինական հարցադրումները առ այսօր մնում են անպատասխան:

Խօսելով 2008 թ.ի Մարտի 1-ի առաւօտեան Օպերայի հրապարակը ցուցարարներից ազատելու գործողութեան մասին՝ իշխանութիւններն այն ներկայացրեցին, որպէս թաքցուած գէնքի եւ զինամթերքի յայտնաբերման գործողութիւն, հանրային հեռուստատեսութեան մասնակրկիտ նկարահանումները առա-

ջին հերթին ցոյց են տալիս ծառերի մէջ կուցած ոստիկաններին, որոնք յայտնաբերում են ինչ որ նռնակներ, փամփուշտատուփեր եւ ատրճանակներ:

Այս նկարահանումները ծաւալուն կերպով օգտագործուել են այն գաղափարի տարածման գործում, որ մինչ այդ օրը խաղաղ ցուցարարները, վերջապէս նպատակադրուել էին բռնի ուժով յեղաշրջում իրականացնել:

Մինչդեռ հանելուկ է, որ ոստիկանները ձեռք էին տալիս եւ ցուցադրում նշուած գէնքերը առանց պահպանելու տարրական զգուշաւորութեան միջոցներ, որոնք անհրաժեշտ են մատնահետքերի ապացուցների պահպանման եւ գէնքը օգտագործած անձանց նոյնականացման համար:

Ի վերջոյ, եւ յատկապէս, ի՞նչ պատճառով մինչ օրս յարուցուած գործերից ոչ մէկը ուղղակիօճէն չի առնչուում այդ գէնքի յայտնաբերմանը:

Ինչ վերաբերում է 10 հոգու մահուան պատճառ դարձած եւ Արտակարգ Իրավիճակի յայտարարման համար հիմնաւորում հանդիսացած ճշգրիտ հանգամանքներին, ապա այստեղ եւս բազում անպատասխան հարցեր կան:

Ըստ պաշտօնական վարկածի՝ հանրային ազատութիւնների սահմանափակման այս միջոցը անհրաժեշտ է եղել որոշ ցուցարարների կողմից իրաւապահ ծառայութիւնների նկատմամբ հրազենով իրականացուած բռնութիւնների արդիւնքում, մինչդեռ վերջիններիս իրենց գէնքը չեն օգտագործել:

Բազմաթիւ տեղեկութիւններ թոյլ են տալիս կասկածել այս փաստերի հաւաստիութեանը:

- Նկարահանուած ժապաւէնները վկայում են, որ օրինապահները օգտագործել են գէնք եւ կրակել են մարդու հասակի բարձրութեամբ՝ օգտագործելով լուսարձակող փամփուշտներ, որոնց օգտագործումն այնուամենայնիւ խստօրէն կանոնադրուած է:

- Որոշ զոհեր սպանուել կամ վիրաւորուել են Լէոյի փողոցում՝ մեծ ցոյցից մի քանի հարիւր մեթր հեռու, աւելին, օրինապահների օղակի հետեւում: Հաշուի առնելով վայրերի դիրքը՝ անհաւանական է թւում այն, որ մի քանի տասնեակ անձինք կարողանային այդ փոքրիկ փողոցում ստեղծել այնպիսի ապստամբային իրավիճակ, որի դէմ իշխանութիւնների միակ ընտրութիւնը լինէր ամենակոշտ ճնշմանը դիմելը:

- Որոշ զոհերի գնդակը դիպել է հետեւից, կամ գլխին, ինչը սնում է դիպուկահարների ներկայութեան վերաբերեալ պտտուող խելացեղ լուրերը:

- Որոշ զոհեր ընդդիմութեան համակիրներ չեն եղել եւ չեն մասնակցել հանրահաւաքներին:

- Խնամութիւնների կողոպուտը տեղի է ունեցել Մաշտոցի պողոտայում, որը հանրահաւաքից մեծապէս հեռու է գտնուում, եւ ուղեկցուել է տեղում մեծ քանակով ներկայ ոստիկանների ապշեցնող հանդուրժողականութեամբ:

Վերջապէս, այնպիսի հարցեր, ինչպիսիք են բանակի ներկայութիւնը, դրա ժամանելու ժամը, օգտագործուած գէնքի ու զինամթերքի բնոյթը, ցուցարարների վրայ կրակ բացելու որոշումը, մինչ օրս պարզ չեն:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մարտնակուած էջ 5-էն

պաշտպանութեան ռազմավարական նախապայմաններու ապահովումը, արտագաղթի կասեցման սատարող միջոցներու ձեռնարկումը, դիւանագիտական մեկուսացման վերացումը, տարածաշրջանի աշխարհաքաղաքական խախտած հաւասարակշռութեան վերահաստատումը, եւ դեռ շատ ու շատ հիմնահարցեր որոնց արդիւնաւէտ քննարկման կարելի է մօտենալ նախագահական մակարդակի վրայ միայն:

Այս իշխանութիւնները կամայականօրէն յամուեցան իրենց խափանարարական ներկայ ամուլ եւ գուտ ինքնապահպանական ընթացքին մէջ: Արթնացած ժողովուրդը, սակայն, գիտցաւ արհամարհանքով չըջանցել՝ պետութիւն խաղացող մեծ ու պոտիկ ներքինիներու եւ ծաղրածուներու անպատկառ կրկնէր: Մարգարէ ըլլալը ամենեւին պայման չէր՝ կանխատեսելու համար թէ՛ նոր ոտքի կանգնած հայրենի քաղաքացիական հասարակութիւնը վստահօրէն եւ անհրաժեշտօրէն յաղթական դուրս պիտի գար աւագակապետութեան բացայայտ կամ քողարկուած բոլոր սադրանքներուն դէմ: Եւ վերջին շաբթուայ իրադարձութիւնները անգամ մը եւս հաստատեցին սա պարզ ճշմարտութիւնը: -

Հայրենի ժողովուրդը ոչ միայն անտէր չէ այլեւս, այլ գիտակից եւ ինքնավստահ տէ՛րն է իր երկրին ու ճակատագրին: Ներկայ Հայաստանի վճռական ու կարգապահ յառաջապահը կը հանդիսանայ՝ քաղաքացիական նոր ծնունդ առած հասարակութեան համերաշխ ու միակամ այն բազմահարիւր հազարանոց հրաշալի համախմբումը որու ետին կանգնած է

Չնայած յարուցուած բազմաթիւ գործերին, մնք չենք գտել, որ դատական գործընթաց է սկսուել՝ բացայայտելու համար հրազենային կրակոցների հեղինակներին՝ անկախ այն բանից, թէ՛ զոհերը քաղաքացիական անձինք են եղել, թէ՛ ոստիկաններ:

Ի վերջոյ, կը ցանկանայինք աւարտել Հայաստանը ցնցած Մարտի 1-ի գիշերուայ ողբերգութեան զոհերի ընտանիքների իրավիճակով:

Դրանցից ոչ մէկը մեր առաքելութեան պահին բողոք չէր ներկայացրել: Համապատասխան տեղեկութիւններով՝ նրանց նկատմամբ ճնշումներ են իրականացուել կամ գուարմներ են առաջարկուել՝ «էջը շրջելու» եւ թաղման ծախսերը հոգալու համար:

Նրանք, ովքեր չեն կարողանում համաձայնել այս կարգի առաջարկներին, այնուամենայնիւ վախ են յայտնում, որ կ'ենթարկուեն հետապնդումների՝ որպէս ճշմարտութիւնը պահանջելու յանդգնութեան անխուսափելի հետեւանք:

համայն ժողովուրդը: Այս հերոսական յառաջապահն էր որ, արհամարհելով բոլոր ապօրինի արգելքներն ու վատագի սպառնալիքները, Յունիս 20-ին խիտ շարքերով ամուրկանգնեցաւ Երեւանի Մատենադարանին առջեւ եւ պետութիւնը բռնազրաւած ապօրինի իշխանութիւններու երեսին խիզախօրէն հնչեցուց իր արդար պահանջները - քաղաքական բոլոր բանտարկեալներու ազատ արձակում, սահմանադրութեան եւ օրէնքի կամայական զեղծումներու վերացում, վերջին տասնամեակի քաղաքական քողածածկուած բոլոր ոճիրներու դատական արդար հետաքննութիւն, հարստապետերու աւագակախումբի լուծարում, խորհրդարանական ու նախագահական նոր եւ արդար ընտրութիւններու ձեռնարկում:

Ուրախութիւն է աւելցնել թէ գիտակցութեան նոյն օրինակելի ըմբռնումը ցուցաբերեցին «փոքրիկ» երեւանցիները: Անոնք անբաղաւորելիօրէն շատ աւելի բարձր կանգնեցան քան Ազատութեան հրապարակը շրջափակած եւ մինչեւ ակռաները գինուած ոստիկանները: Մեր աննման «փոքրիկ» - բայց շատ արագ մեծցած - երեւանցիները մերժեցին ենթարկուել խելագարուած իշխանութիւններու կեղծ միջոցառման անմիտ խաղին ու չերեւացին իսկ Ազատութեան հրապարակին վրայ Յունիս 20-ին: Հոն վիտացող հաստավիզ ոստիկանները հետաքրքրուող անցորդներուն չէին կրնար խելամիտ բացատրութիւն մը տալ իսկ թէ՛ ինչո՞ւ համար էին տեղադրուած հրապարակը ծածկող գոյնզգոյն զարդարանքները գորս այսքան կանուխ ետ կը վերցնէին՝ լոյս ցրեկը շաւարտած: Իրենց չէֆիկները այդ մասին գիրենք տեղեակ պահելու հոգն իսկ աւելորդ գտած էին:

Եւ նոյնիսկ աւելի, քան իրենց դիրքորոշման համար ձերբակալուածներին ընտանիքները, զոհերի ընտանիքները կազմած են մի սարսափելի միացութեան առջեւ, որը դատական համակարգը հրաժարուած է փարատել:

Ինչպէս Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի առաջարկած անհրաժեշտ անկախ փորձագիտութեան իրականացումը, այնպէս էլ բոլոր քաղաքական բանտարկեալների ազատումը իշխանութիւնների կողմից եւ զոհերի ընտանիքների իրաւունքը փաստաբանի օգնութեամբ դատական կարգով այդ դէպքերի վերաբերեալ ճշմարտութեան վերահանումը մեզ հրատապ են թւում:

ՓԱՐԻՋԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՆՏՈՒՄԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՆԵՔՍԱՆԴՐ ԱՍԼԱՆԵԱՆ, ՎԻՐՅՈՒՆԻ ԲԼԱՆՇԻ, ԱՆԵՔՍԱՆԴ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ, ՍԻԼՎԻ ՓԱՓԱՋԵԱՆ, ԱՆԱՀԻՏ ՓԱՓԱՋԵԱՆ, ԺԵՐԱՐ ԶՈՒԱՔԵԱՆ

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱՐՕ ԻՍԱՀԱԿ ՀԱՃԸՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ ներքոյ չիշեալ անձերը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթի ֆոնտին կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները:

Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան	\$50
Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան	\$50
Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան	\$50
Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրօյլեան	\$50
Տէր եւ Տիկ. Վազգէն Պօղարեան	\$50

“The Friends of Armenian Arts” Proudly Presents “BRAVO” TBILISI ARMENIAN THEATRE

TBILISI'S PETROS ADAMYAN STATE ARMENIAN DRAMATIC THEATRE

Exclusive stop in Los Angeles during a National Tour

«Կեցցէ՛»

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անունան Պետական Հայկական
Դրամատիկական Թատրոնի հիւրախաղերը Միացեալ Նահանգներում

www.bravotbilisiarmeniantheatre.com



Pepo

Պէպօ

SATURDAY SEPTEMBER 6, 7:00 P.M.



Մուսկուսի
Փեսայուները

My
Daughter's
Fiances

SUNDAY SEPTEMBER 7, 7:00 P.M.



Love
Under
The Elms

Սերը Ծիփիների

SATURDAY SEPTEMBER 27, 7:00 P.M.



Be Healthy

Դուրս
Աղջ Լիկտ


SUNDAY SEPTEMBER 28, 7:00 P.M.



Khataballa

Խաթաբալա

SUNDAY OCTOBER 5, 7:00 P.M.



The
Guards of
Ruins

Աւերակների
Պահակները

SUNDAY OCTOBER 12, 7:00 P.M.

SIX DIFFERENT DAYS! SIX DIFFERENT PLAYS!

ONE CHANCE TO SEE EACH PLAY



GLENDALE HIGH SCHOOL AUDITORIUM

1440 E. BROADWAY, GLENDALE, CA

Mail delivery: 818.637.2191 • Free ticket delivery: 818.265.0506

Get your tickets on line at: itsmyseat.com • Recorded event message: 818.487.5563

RESERVE YOUR TICKETS TODAY

Group discounted tickets are available